



Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման
պետական ռազմավարության 2020 թվականի գործնական
պլանի կատարման հաշվետվություն

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական
իրավահավասարության հարցերով





**Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով
պետական նախարարի աշխատակազմ**

**Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական
ռազմավարության**

2020 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն

Թբիլիսի
2021 թ.

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով
պետական նախարարի աշխատակազմ

Հասցե. Թբիլիսի, 0114, Ինգոբրոդվա փ. № 7

Հեռախոս. (+995 32) 2923299; (+995 32) 2922632

Կայք-էջ. www.smr.gov.ge

Էլ.-փոստ. press@smr.gov.ge

Նախարան

Ռազմավարական նպատակ 1.....

Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Ռազմավարական նպատակ 2.....

Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

Ռազմավարական նպատակ 3.....

Որակյալ կրթության հասանելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում

Ռազմավարական նպատակ 4.....

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում

ՆԱԽԱԲԱՆ

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմը համակարգում է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականության մշակման, իրականացման աշխատանքները և հաշվետվությունը: Վերոնշյալ քաղաքականության նպատակը էթնիկ փոքրամասնություններին աջակցությունն է, հասարակությունում նրանց լիարժեք ինտեգրման ապահովումը, մշակութային բազմազանության օժանդակումը և հանդուրժողական միջավայրի հաստատումը:

Քաղաքացիական ինտեգրման քաղաքականության հիմնական մեխանիզմ է ներկայացնում «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և 2015-2020 թթ. գործնական պլանը», որը հենվում է իրավահավասարության սկզբունքի և «Ավելի բազմազանություն, ավելի ինտեգրում» մոտեցման վրա: Պետական ռազմավարությունն ուղղված է մի կողմից հասարակական կյանքի բոլոր ոլորտներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ամեն մի քաղաքացու հավասար, լիարժեք և պատվավոր մասնակցության բարելավմանը, իսկ մյուս կողմից՝ էթնիկ փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը և հանդուրժողական միջավայրի ուժեղացմանը:

2020 թվականին շարունակվեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և համապատասխան գործնական պլանի իմպլեմենտացիայի գործընթացը:

Աշխատանքն ընթացավ ռազմավարությամբ որոշված չորս գերակայող նպատակի շրջանակներում.

- ❖ հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին,
- ❖ հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում,
- ❖ որակյալ կրթության հասանելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում,
- ❖ էթնիկ փոքրամասնությունների մշակութային պահպանում և հանդուրժողական միջավայրի ապահովում:

2020 թվականի վերջին սպառվեց ընթացիկ ռազմավարության ժամկետը: Համապատասխանաբար, պետական նախարարի աշխատակազմը, անկախ փորձագետների հետ համագործակցությամբ, պատրաստեց գործող ռազմավարության և գործնական պլանի կատարման միջանկյալ և վերջնական գնահատման հաշվետվություններ, ինչը Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի խորհրդատուների կոմիտեի կողմից Վրաստանի նկատմամբ հրապարակված եզրահանգումների և ոչկառավարական կազմակերպությունների հանձնարարականների հետ միասին դրվեց նոր

ռազմավարական փաստաթղթի հիմքում, նկատառվեցին դեռևս գոյություն ունեցող մարտահրավերները և ձևավորվեցին դրանց հաղթահարման մեխանիզմները:

«Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և գործնական պլանի (2021-2030 թթ.)» նոր փաստաթղթի վրա աշխատանքն ընթացավ պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությամբ, Վրաստանի կառավարության վարչության հետ համագործակցությամբ և ճյուղային պետական գերատեսչությունների ընդգրկմամբ, քաղաքացիական սեկտորի, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի և առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, շահագրգռված անձանց ակտիվ մասնակցությամբ:

Տարվա ընթացքում պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ աշխատանքը շարունակեց պետական ռազմավարության և գործնական պլանի իրականացման գործընթացը արդյունավետ վարելու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովը: Տեղի ունեցան հանձնաժողովի արտագնա նիստեր, աշխատանքային հանդիպումներ, թեմատիկ բանավեճեր և խորհրդատվություններ, մշակվեցին առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք նախատեսված են նոր ռազմավարական փաստաթղթում:

Միաժամանակ, գլոբալային համավարակի (պանդեմիայի) և երկրում առկա համաճարակային իրավիճակից ելնելով, հրատապ ռեժիմով պլանավորվեցին և իրականացվեցին նախագծեր և միջոցառումներ, որոնք նպաստեցին կորոնավիրուսի կանխարգելման հետ կապված հարցերի մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածության և գիտակցության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքացիների սոցիալական վիճակի թեթևացման նպատակով իրականացվեցին սոցիալ-տնտեսական օգնության ընթացակարգեր:

Սույն փաստաթուղթը, որը պատրաստվեց պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ, արտացոլում է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության շրջանակներում, պետական հաստատությունների կողմից 2020 թվականի գործնական պլանով (հունվար-դեկտեմբեր) իրականացված գործունեության մասին տեղեկատվությունը:

Ռազմավարական նպատակ 1

Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Միջանկյալ նպատակ - 1.1. Աջակցություն փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին

Խնդիր - 1.1.1 Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականության մշակում և իրականացում

Տրված խնդրի շրջանակներում ակնհայտ են հետևյալ ուղղությունները.

- ❖ աջակցություն փոքրաթիվ էթնիկ խմբերի ինքնության պահպանությանը,
- ❖ կրթական համակարգում գնչու երիտասարդների ընդգրկում:

Քաղաքացիական իրավահավասարության պետական քաղաքականությունը նախատեսում է ամբողջական մոտեցում ինչպես մեծաթիվ, այնպես էլ փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ, ինչը նպատակաուղղված է մշակութային ինքնության պահպանությանը և աջակցությանը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընդգրկվածության բարելավմանը:

2020 թվականի ընթացքում շարունակվեց ըստ պահանջի որոշակի հանրային դպրոցներում փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզվի ուսուցումը (օսերեն, չեչներեն, ավարերեն, ուդերեն, ասորերեն):

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը գնչու պատանիներին կրթական համակարգում ընդգրկելու նպատակով, «Կրթություն ստանալու երկրորդ հնարավորությունը սոցիալական ինկլյուզիայի ուղիով» ծրագրի շրջանակներում ֆինանսավորեց 13 նախագիծ, այդ թվում 3 նախագիծ նպատակաուղղված էր գնչուների սոցիալականացմանը:

1.1.1.1 Սոցիալական սպասարկումների մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ

Փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար COVID-19-ի համավարակի պայմաններում առանձնապես հրատապ էր մի կողմից ժամանակին և արդյունավետ իրազեկումը կորոնավիրուսի հետ կապված բոլոր օրակարգային հարցերի մասին, իսկ մյուս կողմից՝ նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակի թեթևացման նպատակով մարդասիրական օգնություն ցուցաբերելը: Գնչու բնակչության հետ Վրաստանի զանգվածով տարբեր տեղայնությամբ (Գարդաբանի, Դեդոփլիսծղարո, Թելավի, Թբիլիսի, Փոթի, Սամտրեդիա, Քուրախի, Քոբուլեթի) կայացան հանդիպումներ: Հանդիպումների ժամանակ նրանց հաղորդվեց տեղեկատվություն կարևոր հարցերի մասին և միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի երեխաների պաշտպանության հիմնադրամի աջակցությամբ փոխանցվեցին սննդամթերքների և հիգիենիկ միջոցների զամբյուղներ (380 զամբյուղ):

1.1.1.2 Խոցելի էթնիկ փոքրամասնությունների հարցերով կառավարական հանձնաժողովի աշխատանքային խմբի հետ հանդիպում

Համավարակի պայմաններում, կառավարական հանձնաժողովի աշխատանքային խմբի ձևաչափով նշված ակտիվությունը չի իրականացվել, թեև պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, կորոնավիրուսի կանխարգելման կապակցությամբ հատուկ ստեղծված միջգերատեսչական համակարգող խորհրդի ձևաչափով քննարկվել են գնչու բնակչության կարիքները, և պետական նախարարի համակարգմամբ նրանց նկատմամբ իրականացվել է ակնթարթային արձագանք: Դիտե՛ք ակտիվությունը 1.1.1.1.

1.1.1.3 ՈւԻԱ Բաթումի «Բարեկամության տուն» մշակույթի կենտրոնի շրջանակներում օգնություն է ցուցաբերվել քաղաք Բաթումիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին նույնականացման փաստաթղթերի կարգավորման հարցում

Տարվա ընթացքում հարցի կապակցությամբ դիմումներ չեն ամրագրվել, համապատասխանաբար սպասարկում չի իրականացվել:

1.1.1.4 Ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյին (Քաղաքային ժողով)) առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ հանդիպումների կազմակերպում

Ք.Թբիլիսիի Սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.1.1.5 Տեղեկատվական քարոզչություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մունիցիպալային սպասարկումներ մատուցելու մասին

Պետական նախարարի աշխատակազմը, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչությանը աջակցության նպատակով, շարունակում է ակտիվ ռեժիմով իրականացնել տեղեկատվական և սոցիալական օգնության ընթացակարգեր: Տեղեկատվական ընթացակարգն իրականացվեց երեք ուղղությամբ.

- ❖ պատրաստվեց և հայերեն ու ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեց հակաճգնաժամային պլան և կորոնավիրուսի կանխարգելման կապակցությամբ շուրջ 100 000 բրոշյուր, որը դրնեղուռ սկզբունքով տարածվեց Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում,
- ❖ վերապատրաստում անցան երկու լեզուների տիրապետող երիտասարդներ, ովքեր որպես օպերատորներ աշխատանքի անցան կառավարական թեժ գծի վրա՝ 144-1: Նշված թեժ գծի միջոցով քաղաքացիներին հնարավորություն էր տրվում, ընդորում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, անցնել խորհրդատվություն տեղաշարժի ժամանակավոր սահմանափակման պայմաններում անցաթուղթ տրամադրելու վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում ստանալ սպասարկում:
- ❖ վերապատրաստում անցավ երկու լեզուների տիրապետող երիտասարդների կամավորական խումբ, որի անդամները ապահովում են էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում հասակակիցների հետ հեռավար հանդիպումների անցկացումը կորոնավիրուսի կանխարգելման հետ կապված հարցերի, այդ թվում հակաճգնաժամային պլանի կապակցությամբ: 5 մունիցիպալիտետի, 36 գյուղերում անցկացվեց 7 հանդիպում/վարժանք, որոնց մասնակցեցին 267 շահառուներ:

Միջանկյալ նպատակ. 1.2 գենդերային մեյնստրիմինգ

Խնդիր. 1.2.1 Աջակցություն գենդերային նշանով խտրականությունը արմատախիլ անելուն

Տարվա ընթացքում քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման կառավարական հանձնաժողովի գործունեությանը ընդգրկված պետական գերատեսչությունները շարունակեցին կոնկրետ միջոցառումների և նախագծերի իրականացումը հետևյալ առաջնահերթային ուղղություններով.

- ❖ կանանց իրավունքների/գենդերային հավասարության մասին գիտակցության բարձրացում,
- ❖ ընտանիքում բռնության/վաղ ամուսնության մասին տեղեկատվության հասանելիություն,
- ❖ աջակցություն կանանց սոցիալ-տնտեսական ուժեղացմանը:

1.2.1.1 Գենդերային հավասարության թեմայով տեղեկատվական հանդիպումներ Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջանների մունիցիպալիտետների բնակչության հետ

Պետական նախարարի աշխատակազմի կողմից պլանավորված միջոցառումը չի իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.2 Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի կանանց համար ուսումնական վարժանք-դասընթացի անցկացում «Ինչպես սկսենք և զարգացնենք բիզնես»

Պետական նախարարի աշխատակազմի և ՀԻԻԱ ֆինանսների նախարարության ակադեմիայի համատեղ նախաձեռնության շրջանակներում, Սամցխե-Ջավախեթում բնակվող կանանց համար անցկացվեց ուսումնական/վարժանք-դասընթաց՝ «Ձեռներեցության գործնական դասընթաց – ներդրումային առաջարկության պատրաստում և ներկայացում» արդիականացված խորագրով: Ուսումնական դասընթացի նպատակը ձեռներեցության մասին տեսական գիտելիքի բարձրացումը և բիզնես վարելու գործնական ունակությունների ուժեղացումն էր, վարժանք դասընթացին մասնակցեց Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում բնակվող 16 շահառու, ովքեր դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո ստացան վկայականներ:

1.2.1.3 Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջանների բնակչության համար գենդերային հավասարության թեմայով տեղեկատվական հանդիպումների անցկացում, տեղեկատվական նյութերի բաժանում

Իլիայի համալսարանի իրավունքի դպրոցի, Արևելք-Արևմուտքի կառավարման ինստիտուտի «Աջակցություն Վրաստանում օրենքի գերակայությանը» (USAID/PROLoG) ծրագրի հետ համագործակցությամբ, կանանց նկատմամբ բռնության դեմ 16-օրյա ընթացակարգի շրջանակներում, հեռավար հարթակով տեղի ունեցավ բանավեճ «Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը COVID-19-ի համատեքստում» թեմայով: Միջոցառման շրջանակներում, Վրաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը խոսեց նախարարության կողմից գենդերային նշանով բռնության դեմ պայքարի մեխանիզմների, ձեռքբերած առաջընթացի և գոյություն ունեցող մարտահրավերների մասին: Նշված միջոցառումներին մասնակցում էին նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

1.2.1.4 Խտրականության (այդ թվում գենդերային) նշանով անհանդուրժողականության մոտիվի մասին օրենսդրական փաթեթի պատրաստում Քրեական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու նպատակով

Վրաստանի ներքին գործերի նախարարությունում ընթանում է խտրականության (այդ թվում, գենդերային) նշանով անհանդուրժողականության մոտիվով կատարված հանցագործությունների վերաբերյալ Քրեական հանցագործության օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին օրենքի նախագծի վրա աշխատանք: Օրենքի նախագծով նախատեսված է խտրականության (այդ թվում, գենդերային) նշանով կատարված հանցագործության դեմ պայքարի մեխանիզմների զգալի բարելավում: Նախագիծը մշակելիս Վրաստանի ներքին գործերի նախարարությունը ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի խորհրդի, կառավարական և ոչկառավարական կազմակերպությունների հետ:

1.2.1.5 Հասարակական-խորհրդատվական խորհուրդների նիստերի անցկացում

Կախերի երկրամասում պետական-լիազորի վարչության կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել երկրում ստեղծված համավարակային (COVID – 19 համավարակ) իրավիճակի պատճառով:

1.2.1.6 «Կանանց սենյակի» կողմից պլանավորված միջոցառումների իրականացում, գենդերային հարցերով աշխատող ոչկառավարական կազմակերպությունների հետ հանդիպումներին, վարժանքներին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում

2020 թվականի ընթացքում Ախմետայի մունիցիպալիտետի «Կանանց սենյակը» իրականացրեց հետևյալ հանդիպումները, վարժանքները և ակտիվությունները.

- ❖ ք. Թբիլիսիի սակրեբուլոյի շենքում կայացավ Վրաստանի զանգվածով «կանանց սենյակների» մենեջերների միացյալ հանդիպում, որտեղ քննարկվեցին «կանանց սենյակների» դերի բարձրացման հնարավորությունը և ապագայի պլանները, նշված

հանդիպմանը մասնակցում էին նաև Ախմետայի «Կանանց սենյակի» ներկայացուցիչները:

- ❖ Մունիցիպալիտետում, կանանց տնտեսական գորեղացման տեսանկյունից առկա իրավիճակի, մարտահրավերների քննարկման նպատակով, տեղի ունեցավ հանդիպում Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին գյուղի բնակիչներ, ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչ, տեղական ֆերմեր, ձեռներեց և քաղաքապետարանի աշխատակից կանայք: Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները անմիջականորեն նրանցից լսեցին կանանց տնտեսական ուժեղացման տեսանկյունից մունիցիպալիտետում գոյություն ունեցող իրավիճակի մասին: Հանդիպումն ընթացավ հարց-պատասխանի ձևաչափով, որտեղ խոսվեց տեղական ինքնակառավարման առանձնահատուկ նշանակության մասին:

1.2.1.7 Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ՈՒԻՍ Բաթումիի «Բարեկամության տուն» մշակույթի կենտրոնի «Կանանց ակումբի» շրջանակներում հանդիպումների կազմակերպում կանանց նկատմամբ բռնության կրճատման/կանխարգելման նպատակով

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.8 Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ՈՒԻՍ Բաթումիի «Բարեկամության տուն» մշակույթի կենտրոնում տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչների հետ գենդերային հավասարության թեմայով տեղեկատվական հանդիպումների անցկացում

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.9 Ք. Թբիլիսիի Սակրեբուլոյին կից գործող գենդերային խորհրդի կողմից կազմակերպված հանդիպումների անցկացում

Ք. Թբիլիսիի Սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվությանը համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.10 Կանանց նկատմամբ բռնության/ընտանիքում բռնության և սեռական բռնության հարցերով, ինչպես նաև գոյություն ունեցող պետական ծրագրերի և սպասարկումների մասին գիտակցության բարձրացման նպատակով կրթական տեղեկատվական հանդիպումների կազմակերպում ք. Թբիլիսիում և տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ (տարեկան առնվազն 1 հանդիպում)

Վրաստանի բնագրավված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.11 «Կանանց սենյակ» մունիցիպալային սպասարկման կողմից թեմատիկ հանդիպումների/վարժանքների անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում **Մառնեուլիի մունիցիպալիտետի** «Կանանց սենյակ» մունիցիպալային սպասարկման կողմից իրականացվեցին տարբերակ տիվություններ/նախագծեր: Մասնավորապես, «Կանանց սենյակի» աջակցությամբ իրականացվեց.

- ❖ նախագիծ - «Դեկորատիվ բույսերի բազմացում», ֆինանսավորվեց էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 2 կնոջ նախագիծ,
- ❖ 10 ձեռներեց կանանց մասնակցությամբ անցկացվեց հետազոտություն, որտեղ բացահայտվեցին նրանց հիմնական կարիքները,
- ❖ մունիցիպալիտետի 40 գյուղում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող գյուղերում, անցկացվեց հետազոտություն՝ COVID-19-ի շրջանակներում բացահայտված հիմնական կարիքները նույնականացնելու նպատակով,
- ❖ «Կանանց սենյակի» ներկայացուցիչների կողմից 18 վարչական միավորի մասշտաբով, ընտրվեցին ակտիվ երիտասարդներ, ովքեր վրաց-ադրբեջանական լեզվով իրականացրեցին գիտակցության բարձրացման քարոզչություն «Մնա տանը», «Զգուշանանք միմյանց համար» կարգախոսով,
- ❖ նախագծերի պատրաստության փուլում, 8 տեղացի կանանց համար իրականացվեց աջակցություն,
- ❖ սոցիալապես կարիքավոր 35 կնոջ ցուցաբերվեց մեկանգամյա մարդասիրական օգնություն:

Ռուսթավիի մունիցիպալիտետի վարչական շենքում, մունիցիպալիտետի մասշտաբով բնակվող կանանց գիտակցության բարձրացման նպատակով, անցկացվեց 12 տեղեկատվական հանդիպում իրավական, տնտեսական, ֆինանսական, հասարակական և այլ ակտուալ հարցերի կապակցությամբ (89 շահառու):

Դմանիսի մունիցիպալիտետի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.2.1.12 Գենդերային հավասարության, կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության հարցերով մունիցիպալիտետներում համապատասխան հանձնաժողովների ստեղծում/կամ «Կանանց սենյակների» կողմից գործնական ծրագրերի մշակում

2020 թվականին Սամցխե-Ջավախեթի երկրամասի լիազոր-նահանգապետի վարչության գենդերի մասին պատասխանատու անձի համակարգմամբ, «Կանանց սենյակների» կողմից մունիցիպալիտետներում իրականացվեց գենդերային հավասարության, կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության հարցերով գործնական ծրագրերի մշակում: Այս փուլում ընթանում է ընտանիքում բռնության զոհ կանանց վիճակագրական տվյալների բազայի ձևավորում և կանխարգելիչ միջոցառումների պլանավորում:

Հավելյալ միջոցառում.

2020 թվականին **Գարդաբանիի մունիցիպալիտետում** գենդերային հավասարության խորհրդի անդամների և հանրային գործիչների համար հեռավար ձևաչափով անցկացվեցին վարժանքներ գենդերային հավասարության, կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության հարցերով:

Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում 2020 թվականի ընթացքում գենդերային մեյնստրիմինգի ուղղությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, այդ թվում մունիցիպալիտետը միացավ բռնության դեմ 16-օրյա ընթացակարգին, գործում էր բռնության զոհերին ցուցաբերվող դրամական օգնություն, ինչպես նաև օգնություն ցուցաբերվեց բազմազավակ ընտանիքներին: Կանանց տնտեսական ուժեղացման ուղղությամբ, պետական դրամաշնորհային նախագծերի մասին տեղեկատվություն հաղորդվեց մունիցիպալիտետում բնակվող 18 շահառուի:

Միջանկյալ նպատակ. 1.3 Պետական վարչարարությանը և իրավապահ մարմիններին ու մեխանիզմներին հասանելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր. 1.3.1 **Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում պետական լեզվին չտիրապետող քաղաքացիներին օժանդակություն ոչպետական լեզվով կազմած փաստաթղթերի թարգմանություններում**

1.3.1.1 Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին իրազեկվածության բարձրացման նպատակով էթնիկ փոքրամասնությունների լեզուներով (հայերեն և ադրբեջաներեն) տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում

2020 թվականին, ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի կազմակերպմամբ, Թբիլիսիում և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում, ինչպես ուղղակի հաղորդակցության ճանապարհով, այնպես էլ թվանշանային ձևաչափով, եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին անցկացվեց շուրջ 25 հանդիպում (մինչև 350 շահառու):

Տարվա ընթացքում, կենտրոնը սոցիալական լրատվամիջոցների միջոցով իրականացնում էր ակտիվ տեղեկատվական քարոզչություն արևմտյան ինստիտուտների աշխատանքի սկզբունքների, արևմտյան արժեքների, Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման նշանակության, դրական արդյունքների և առկա հնարավորությունների մասին: Տեղեկատվական քարոզարշավի շրջանակներում համապատասխան տեղեկատվություն պատրաստվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով և տարածվեց համապատասխան թիրախային խմբերին:

Հատկանշական է, որ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին իրազեկվածության բարձրացման նպատակով, տեղեկատվական կենտրոնը պատրաստեց և հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանեց տեղեկատվական նյութեր. «Ուղեցույց ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին», «Առասպելներ՝ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին»: Ընթանում է կենտրոնի պաշտոնական կայք-էջի թարմացում և թարգմանություն հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

1.3.1.2 «Բարեկամության տան» գործունեության շրջանակներում, ըստ կարիքների, վրացերեն լեզվով չգրված դիմումների և այլ փաստաթղթերի թարգմանության ապահովում, անհրաժեշտության դեպքում նոտարական վավերացում

Հաշվետու ժամանակաշրջանում ք. Բաթումիի «Բարեկամության տանը» նշված հարցի կապակցությամբ դիմումներ չեն եղել, համապատասխանաբար, ներկայացված ակտիվությունը չի իրականացվել:

1.3.1.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին ք. Թբիլիսիի սակրեբուլոյի ընդունած/ընդունելի որոշումներին ծանոթացում

Ք.Թբիլիսիի Սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.3.1.4 Պետական լեզվի ուսուցում

ՀԻԻԱ Ջուրաբ ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի գործունեության շրջանակներում, Դմանիսի մունիցիպալիտետի ոչվրացալեցու դպրոցներում/սեկտորներում պետական լեզվի դասընթաց 18 դպրոցում անցավ 1970 շահառու:

1.3.1.5 «Մեկ պատուհանի սկզբունքով» սպասարկման արմատավորում բոլոր մունիցիպալիտետներում, համարժեք թարգմանիչներով ապահովում, հայերեն և ռուսերեն լեզվին տիրապետող անձանց բաշխում մունիցիպալիտետներում և պետական լիազորի վարչությունում

Տարվա ընթացքում Սանցիսե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում գործում էր «Մեկ պատուհանի» սկզբունքը և քաղաքացիներին լեզվական պատենշի պատճառով խոչընդոտներ չէին ստեղծվում: Երկրամասային վարչությունում և էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող մունիցիպալիտետների հանրային կառավարման միավորներում աշխատում են հանրային աստիճանավորներ, ովքեր տիրապետում են հայերեն և ռուսերեն լեզուներին և, հարկ եղած դեպքում, օգնություն են ցուցաբերում քաղաքացիներին: Տարվա ընթացքում Սանցիսե-Ջավախեթի նահանգապետի վարչությունում և Ախալցխիսի մունիցիպալիտետի քաղաքապետարանում 1061 քաղաքացու ցուցաբերվեց օգնություն նրանց հասկանալի լեզվով:

Խնդիր. 1.3.2 Պետական լիազոր-նահանգապետի վարչությունում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության բարելավում

1.3.2.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման բարելավման նպատակով մարզային վարչություններում ստեղծված հասարակական-խորհրդատվական խորհրդի նիստերի անցկացում

Քվեմո Քարթլիի և Կախեթի լիազորների վարչությունների կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել COVID-19-ի տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

Խնդիր. 1.3.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սպասարկումների հասանելիության բարելավում

1.3.3.1 Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականության ծանոթացում/էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներին ծանոթության նպատակով հանդիպումների անցկացում

Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, տարվա ընթացքում տեղի ունեցան տարբեր տեսակի հանդիպումներ բնակչության, երիտասարդության հետ, ծանոթության բնույթի հանդիպումներ տարածաշրջաններում, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների- ոչկառավարական կազմակերպությունների, մանկավարժների, տարեցների հետ: Հանդիպումների ժամանակ ինտերակտիվ ռեժիմով քննարկվում էին քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ ձեռքբերված առաջընթացը և դեռևս գոյություն ունեցող մարտահրավերները: Տարվա ընթացքում տեղի ունեցավ շուրջ 30 հանդիպում:

1.3.3.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար քաղաքացիական ինտեգրման հարցերով տեղեկատվական հանդիպումների անցկացում

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի PITA ծրագրով հեռավար հանդիպում տեղի ունեցավ երիտասարդ խմբերի հետ: Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի կառավարության կողմից COVID-19-ի կանխարգելման նպատակով կատարված և պլանավորված քայլերը:

Ինչպես նաև անցկացվեց հեռավար հանդիպում ժողովրդավարական ընդգրկման կենտրոնների ցանցերի աշխատակիցների և Վրաստանի 6 տարածաշրջաններից քաղաքացիական ակտիվիստների, ոչառավարական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Մասնակիցներին սպառիչ տեղեկատվություն հաղորդվեց կորոնավիրուսը հաղթահարելու/կանխարգելելու նպատակով բռնագրավված տարածքներում և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում պետական նախարարի աշխատակազմի կողմից իրականացված գործունեության, ինչպես նաև ընթացիկ միջոցառումների և տեղեկատվական քարոզարշավների կապակցությամբ:

2020 թվականին պետական նախարարի աշխատակազմի գլխավոր գերակայություններից մեկը դարձավ ապատեղեկատվության՝ ինչպես սոցիալական ազդեցության բացասական արդյունքների, այնպես էլ դրա տարածման կանխարգելման ռազմավարությունների մասին գիտակցության բարձրացումը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում : Այդ նպատակով, սկսվեց վարժանքների սերիա «Ապատեղեկատվության ազդեցությունը քաղաքացիական ինտեգրման գործընթացի վրա և դրա կանխարգելման նշանակությունը» թեմայով, որին մասնակցում էին վերը նշված տարածաշրջաններում աշխատող տեղական ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները (30 մասնակից): Վարժանքը շարունակվեց տարբեր թիրախային լսարանների մասնակցությամբ, որոնք ապագայում կօժանդակեն քաղաքացիական ինտեգրման գործընթացում հասարակությանը ճիշտ տեղեկատվության մատուցմանը:

1.3.3.3 Երկրում ընթացիկ երևույթների/տարբեր ակտուալ հարցերի կապակցությամբ տեղեկատվական նյութերի պատրաստում, /թարգմանություն/տպագրում

Վրաստանի կառավարությունը COVID 19 համավարակ հայտարարելու առաջին իսկ օրերից սկսած գործում է մարտահրավերներին ի պատասխան, ինչը մի կողմից քաղաքացիական առողջության մասին հոգատարություն է, իսկ մյուս կողմից նպատակաուղղված է համավարակով առաջացած տնտեսական բարդությունները հաղթահարելուն:

- ❖ Գործարկվեց կառավարական տեղեկատվական կայք-էջ StopCov.ge վեց լեզուներով (վրացերեն, արբիազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն, անգլերեն), որտեղ մշտապես թարմացվող ռեժիմով ընթանում էր տեղեկատվության տեղադրում կորոնավիրուսի հետ կապված բոլոր նորույթների մասին:
- ❖ Գործարկվեց կառավարական տեղեկատվական հատուկ թեժ գիծ 144, որի օգնությամբ քաղաքացիներն ունեն հնարավորություն, այդ թվում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, ստանալու համարժեք խորհրդատվություն:
- ❖ Պետական նախարարի աշխատակազմը, կորոնավիրուսի տարածման առաջին իսկ օրից, ձեռնամուխ եղավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ բնակչությանը հրատապորեն տեղեկատվության հաղորդմանը և ընդհանուր իրազեկմանը: Մարտի 3-ից աննախադեպորեն ընթացավ ակտիվ և ինտենսիվ տեղեկատվության /գիտակցության բարձրացման քարոզարշավ COVID 19-ի տարածման կանխարգելիչ միջոցառումների, սահմանված կարգավորումների և սահմանափակումների, արտոնությունների և փոխհատուցումների մասին:
- ❖ Պատրաստվեցին և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզուներով թարգմանվեցին տեղեկատվական նյութեր կորոնավիրուսի կանխարգելման հետ կապված տարբեր հարցերի մասին: Այդ թվում. հիգիենայի պահպանության կանոններ, կարանտինային կանոններ, հակաճգնաժամային պլան, հաճախ առաջադրվող և այլ ակտուալ հարցեր: 529 100 միավոր տեղեկատվական նյութ (տեղեկատվական բրոշյուրներ և պատատներ) տեղական ինքնակառավարությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ, մի քանի փուլով և դուռ առ դուռ սկզբունքով տարածվեցին Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում:
- ❖ Հասարակությանը իրազեկելու և կանխարգելիչ միջոցառումների թեմատիկայով պատրաստվեցին ոչվրացալեզու թերթերի՝ ադրբեջանալեզու «Գուրջիստան» և հայալեզու «Վրաստան» թերթերի թողարկումներ (տիրաժը՝ 4500) և հատուկ լրացուցիչ խմբագրություն (տիրաժը՝ 6000), որտեղ տեղադրվեց լրիվ տեղեկատվություն կորոնավիրուսի հետ կապված բոլոր հրատապ հարցերի մասին:
- ❖ Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով ապահովված էին տեղեկատվական տեսահոլովակների թարգմանությունը և տեղադրումը տարածաշրջանային հեռուստատեսությունների էթերում:

- ❖ Փուլային կարգով ակտուալ հարցերի կապակցությամբ պատրաստվեցին երկլեզու (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն) կարճ տեքստային հաղորդագրություններ, որոնք էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում տեղադրված ալեհավաքների միջոցով առաքվեցին բջջային հեռախոսահամարների արձանագրություններին,

Իրազեկման քարոզարշավի հետ միասին ուշադրություն հատկացվեց բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի թեթևացման նպատակով նրանց սննդամթերքներ և հիգիենիկ միջոցներ փոխանցելուն: Համավարակի առաջին ալիքի սկսվելուն պես, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) աջակցությամբ, Վրաստանի մասշտաբով բնակվող գնչու ընտանիքներին և միևնույն ժամանակ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ սոցիալապես անպաշտպան բազմազավակ ընտանիքներին, փոխանցվեցին սննդամթերքների զամբյուղներ (605 փաթեթ): Այստեղից Քվեմո Քարթլիի տարածաշրջանում՝ 102 փաթեթ, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում՝ 50 փաթեթ, Կախեթի տարածաշրջանում՝ 73 փաթեթ և գնչուների ընտանիքների համար՝ 380 փաթեթ:

Համավարակի երկրորդ ալիքին ի պատասխան, պետական նախարարի աշխատակազմը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչությանը աջակցության նպատակով շարունակեց ակտիվ ռեժիմով տեղեկատվական և սոցիալական օգնության ընթացակարգերի իրականացումը: Տեղեկատվական քարոզարշավն ընթացավ երեք ուղղությամբ.

- ❖ պատրաստվեց և հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեց հակաճգնաժամային պլանը և կորոնավիրուսի կանխարգելման հետ կապված շուրջ 100 000-բրոշյուր, որը դուռ առ դուռ սկզբունքով տարածվեց Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում,
- ❖ վերապատրաստվեցին երկու լեզուների տիրապետող երիտասարդներ, որոնք որպես օպերատորներ աշխատանքի անցան կառավարական թեժ գծին՝ 144-1: Նշված թեժ գծի միջոցով քաղաքացիներին տրվում է հնարավորություն, այդ թվում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, անցնել խորհրդատվություն սահմանված տեղաշարժի ժամանակավոր սահմանափակման պայմաններում անցագիր տրամադրելու վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում ստանալ սպասարկում:

Վերապատրաստվեց երկու լեզուներին տիրապետող երիտասարդների կամավորական խումբ, ովքեր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում հասակակիցների հետ անցկացրեցին հեռավար հանդիպումներ կորոնավիրուսի հետ կապված հարցերի մասին: Ընդհանուր առմամբ տեղեկատվական քարոզարշավի շրջանակներում անցկացվեցին առցանց հանդիպումներ 5 մունիցիպալիտետի 36 գյուղերում:

Սոցիալական օգնության ընթացակարգը նախատեսում էր Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում բնակվող երկկողմանի ծնողագուրկ և սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար սննդամթերքների և հիգիենիկ միջոցների փաթեթների (729) փոխանցում: Այստեղից, Քվեմո Քարթլիի տարածաշրջանին փոխանցվեց 353 փաթեթ, Սամցխե Ջավախեթի տարածաշրջանին՝ 134, իսկ Կախեթի տարածաշրջանին՝ 242 փաթեթ:

1.3.3.4 Վրաստանի՝ եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ

Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկումը և գիտակցության բարձրացումը ներկայացնում է ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի գլխավոր ուղղություններից մեկը: COVID-19-ի համավարակի պատճառով, քաղաքացիների առավել անվտանգության ապահովման և գործող հանձնարարականների հաշվառմամբ, կենտրոնը 2020 թվականի մարտից գործունեությունը շարունակեց թվանշանային ձևաչափով: Համապատասխանաբար, «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության» 2020 թվականի գործնական պլանով նախատեսված ակտիվությունների մի մասն իրականացվեց փոփոխված, առցանց հանդիպումների ձևաչափով, իսկ որոշ նախագծերի իրականացում ժամանակավորապես հետաձգվեց:

Հաշվետու ժամանակաընթացքում, ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը իրականացրեց տարբեր ակտիվություններ, այդ թվում անցկացվեցին. հանրային դասախոսություններ, սեմինարներ, վարժանքներ, տեղեկատվական հանդիպումներ: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին տեղեկատվություն փոխանցվեց երկրի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի նշանակության և եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացից բխող շահերի մասին: Տեղեկատվական կենտրոնն աշխատեց տարբեր թիրախային լսարանների՝ ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների, լրատվամիջոցների և տեղական բնակչության հետ:

Հատկանշական է ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի կողմից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացված մի քանի նշանակալից նախագծեր. թվանշանային ձևաչափով անցկացված «Եվրոպայի օրեր 2020»-ը, որը ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնն իրականացրեց Վրաստանի խորհրդարանի հետ համագործակցությամբ, «Վրաստանի տարածաշրջաններում արևմտյան ինտեգրման գործընթացի մասին տեղեկացվածության և ընդգրկման աճ» նախագիծը, որը կենտրոնն իրականացնում է

Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտի և Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանության ֆինանսական աջակցությամբ:

1.3.3.5 Նախագիծ «Երիտասարդ եվրոպացի դեսպանների» շրջանակներում Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում

Դիտե՛ք. 1.3.3.14

1.3.3.6 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսուցիչների համար Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին գիտակցության բարձրացման նպատակով նախագծերի իրականացում

ՀԻԻԱ ՆUSO-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.3.3.7 Ք. Բաթումիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մունիցիպալային ծրագրերի մասին տեղեկատվության մատակարարում

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.3.3.8 Հասարակական սպասարկումների և ընթացիկ պետական/ինքնավար հանրապետության/մունիցիպալային ծրագրերի (կրթության ծրագրեր, առողջության և սոցիալական պահպանության ծրագրեր, տարբեր օրենսդրական փոփոխություններ) մասին տեղեկատվության մատակարարում

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.3.3.9 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար տեղեկատվական հանդիպումների կազմակերպում ք. Թբիլիսիի սակրեբուլոյի գործունեությանը ծանոթանալու նպատակով

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.3.3.10 Առողջությանը նպաստող հարցերի մասին պատրաստված կրթական տպագիր և տեսանյութերի տարածում

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ և Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարության հետ համագործակցությամբ, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեցին և պատրաստվեցին COVID-19-ի հետ կապված տեղեկատվական և կրթական նյութեր (հայերեն, ադրբեջաներեն, արխազերեն և օսերեն լեզուներով), պատրաստվեցին սուբ-տիտրեր կրթական տեսահոլովակների համար:

ՀԻԲԱ Լ.Սախվարելիձեի անվան Վրաստանի հիվանդությունների վերահսկման և հանրային առողջության ազգային կենտրոնի իրավասության շրջանակներում, նյութեր տարածվեցին հասարակական առողջության տարածաշրջանային կենտրոնների ցանցի, ինչպես նաև կենտրոնի սոցիալական լրատվամիջոցների և կայք-էջի միջոցով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ, պատրաստվեց COVID-19-ի հաղորդակցական պլան էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների համար, որը նախատեսում է տեղեկատվական և կրթական ակտիվություններ (տպագիր և տեսանյութերի մշակում, վեբինարներ տարբեր թիրախային խմբերում, բուժանձնակազմ, երիտասարդական կազմակերպություններ, հոգևորականներ):

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի աշխատակիցները գտնվում էին Ախալքալաքի մունիցիպալիտետի մի քանի գյուղերում, որտեղ մասնակցեցին կարգավորումների հաշվառմամբ դպրոցի մանկավարժների հետ տեղի ունեցած տեղեկատվական հանդիպումներին:

Տարվա ընթացքում Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի և «Օժանդակություն Ախալքալաքում գյուղի զարգացման նոր մոտեցմանը» նախագծի հետ համագործակցությամբ իրականացվեցին հանդիպումներ:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, առողջապահության համաշխարհային կազմակերպության և Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարության և կենտրոնի համատեղ ջանքերով պատրաստվեց COVID-19-ի հետ կապված ռիսկի հաղորդակցության և հասարակության ընդգրկման 2020-2022 թթ. ռազմավարության փաստաթուղթ և գործնական պլան: Ռազմավարության շրջանակներում դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ընթանում են մի շարք կրթական միջոցառումներ:

Բացի դրանից, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Մեծ Բրիտանիայի կառավարության և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի աջակցությամբ, կենտրոնի կողմից մշակվեց «Վրաստանում ռիսկերի հաղորդակցության ռազմավարությունը հասարակական առողջապահության ճգնաժամային իրավիճակների ժամանակ»:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ պատրաստվեցին տեղեկատվական տեսահոլովակներ դիմակները ճիշտ կրելու, կանխարգելիչ միջոցառումների մասին, առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությամբ կանխարգելիչ միջոցառումների աջակցության համար տեղական հանրահայտ անձանց մասնակցությամբ պատրաստվեց հեռուստատեսային տեսահոլովակ ադրբեջաներեն լեզվով:

Սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ Վրաստանում COVID-19-ի դեմ պատվաստանյութի արմատավորման հաղորդակցության գործնական պլանի մշակման նպատակով:

2020 թվականի առողջությանը աջակցության պետական ծրագրի շրջանակներում իրականացվեց հեռավար ձևաչափով վարժանքների շարք հանրային առողջապահության տարածաշրջանային ներկայացուցչի մասնակցությամբ համավարակի համատեքստում առողջությանը օժանդակելու և թվանշանային հաղորդակցության հարցերի մասին, վարժանքին մասնակցեցին նաև էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների ներկայացուցիչները:

Տարվա ընթացքում, դոնորների ֆինանսավորմամբ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեցին և տպագրվեցին ակտուալ հարցերի կապակցությամբ: տարբեր տեսակի նյութեր:

1.3.3.11 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալներին պատժակատարողական հաստատություններ ընդունելու-տեղավորելու ժամանակ նրանց իրավունքների մասին իրազեկում

Պատժակատարողական հաստատություններում բանտարկյալների իրավունքների մասին թարմացված տեղեկատվության հիման վրա ստեղծվեցին տեքստային տեսահոլովակներ, որոնք հասանելի են բոլոր հիմնարկություններում մեղադրյալ/դատապարտյալներին հեռուստատեսային ալիքներից մեկի միջոցով: Նույնպես բոլոր պատժակատարողական հաստատությունների սոցիալական բաժնում գոյություն ունեն մեղադրյալ/դատապարտյալների իրավունքների մասին տեղեկատվության էլեկտրոնային տարբերակները՝ հինգ լեզուներով. ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն և անգլերեն: Պահանջի դեպքում, ցանկալի լեզվով նշված տեղեկատվությունը հասանելի է տպագիր տեսքով:

Հաշվետու ժամանակաշրջանում պատժակատարողական հաստատություններում դատապարտյալների ներբնակեցման ժամանակ կատարվում էր նրանց իրազեկում «Մեղադրյալներ/դատապարտյալների իրավունքների և պարտականությունների» մասին: Անհրաժեշտության դեպքում, տեղի էր ունենում մեղադրյալ/դատապարտյալի ապահովումը ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր թարգմանական սպասարկմամբ: Դրա հետ միասին,

Եվրամիության պատժակատարողական և պրոբացիայի աջակցության նախագծի (EU4Justice) օգնությամբ մշակվեց և տպագրվեց թարմացված բրոշյուր մեղադրյալ/դատապարտյալի իրավունք-պարտականությունների մասին, որը թարգմանվեց անգլերեն, ռուսերեն, թուրքերեն և պարսկերեն լեզուներով և տարածվեց պատժակատարողական հաստատություններում:

Վրաստանում, ընթացիկ տարվա փետրվարի 26-ին, COVID-19-ի առաջին դեպքի բացահայտումից անմիջապես հետո, Վրաստանի Արդարադատության նախարարությունը և հատուկ պատժակատարողական ծառայության պատժակատարողական հաստատություններում COVID-19-ի հնարավոր տարածման կանխարգելման նպատակով իրականացվում են գործնական միջոցառումներ համարժեք ազգային և միջազգային հանձնարարականներին համապատասխան: Այս գործընթացում նախատեսված են մեղադրյալ/դատապարտյալների հիմնական իրավունքների, նրանց առողջության պահպանության և պատժակատարողական հաստատությունների ժողովրդականացման/աշխատակիցների անվտանգության պահպանության շրջանում հավաստակշռության պահպանման պահանջներ:

Հատկանշական է, որ Վրաստանի Արդարադատության նախարարության և հատուկ պատժակատարողական ծառայության կողմից բոլոր մեղադրյալ/դատապարտյալները, իրենց հասկանալի լեզվով, իրազեկված են հաստատությունում ներդրված սահմանափակումների նպատակների և նշանակության, ինչպես նաև հիգիենիկ ընթացակարգերի պահպանության անհրաժեշտության մասին:

Լրացուցիչ, 2020 թվականի մարտի 20-ին, բոլոր պատժակատարողական հաստատությունների յուրաքանչյուր մեկուսարանում ակտիվացվեց հատուկ հեռուստատեսային ալիք, որի միջոցով էլ բանտարկյալները մշտապես իրազեկված են Վրաստանի պատժակատարողական համակարգում (ՎՊՀ) COVID-19-ի հնարավոր տարածումից խուսափելու համար Վրաստանի Արդարադատության նախարարության և Վրաստանի պատժակատարողական համակարգի կողմից ընդունված միջոցների մասին: Այս նույն ալիքով Վրաստանի կառավարության հատուկ կայք-էջից www.stopcov.ge վերցված համապատասխան տեղեկատվությունը հաղորդվում է երեք տարբեր լեզուներով (վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն):

1.3.3.12 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սպասարկումների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածում

Հասարակական սպասարկումների հասանելիության աճի նպատակով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) Վրաստանի Արդարադատության նախարարությունն ապահովեց հասարակական սպասարկումների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածումը: Նշված նյութերը տարածվեցին հասարակական կենտրոնների, ՀԻԻԱ պետական սպասարկումների

զարգացման գործակալության տարածքային ծառայությունների և արդարադատության տան միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնություններով բնակվող բնակավայրերում գտնվող հասարակական կենտրոնների (Մարթիճալա, Փոկա, Ղվարելձոլարո, Կազրեթի, Կաբալա, Սադախլո, Իորմուղանլո, Վալե, Բարալեթի, Գումբուրդո, Ծալկա, Դմանիսի, Ղաչադանի, Նինոծմինդա և Սսպինձա) միջոցով տարածվեց 2809 տեղեկատվական բրոշյուր: Նշված բրոշյուրները ներառում էին տեղեկատվություն հետևյալ հարցերի մասին. անանցագրային ելուժուտ, ամուսնությունների գրանցում, ընտանիքում բռնություն, գենդերը և սեփականությունը, արդարադատության տան և հասարակական կենտրոնի սպասարկումներ, հողի գրանցում, գյուղատնտեսության զարգացմանը աջակցություն և այլն:

Հատկանշական է, որ COVID-19-ի կանխարգելման նպատակով, ընթացիկ տարվա մայիս ամսից Արդարադատության տան մասնաճյուղերը և հասարակական կենտրոնները տարբերվող ձևաչափով են իրականացնում քաղաքացիների սպասարկումը: Մասնավորապես, շահագրգռված անձնավորությունը Արդարադատության տուն և հասարակական կենտրոնի շենք մտնել և սպասարկում ստանալ կարող է իրեն ցանկալի օրը և ժամին, եթե այցելությունը ամրագրվի my.gov.ge-ի հարթակի վրա:

1.3.3.13 «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում Վրաստանի Եվրահետգրման գործընթացի մասին ToT վարժանքի անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների համար

ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի հետ համագործակցությամբ, «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում պլանավորվեց և անցկացվեցին մարզիչների վարժանքներ (TOT - 40 մասնակից): Վարժանքի մասնակիցները հանդիպեցին պետական կառույցների ներկայացուցիչների և հրավիրյալ փորձագետների հետ, խորացրեցին գիտելիքները եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման, եվրոպական արժեքների, երկրի ապագայի հեռանկարների և ձգտումների, կրթական ծրագրերի, նորույթների մասին և միևնույն ժամանակ, նրանց տրվեց հնարավորություն կատարելագործել հաղորդակցության ունակություն-հմտությունները: Նախագծի հաջորդ փուլում երիտասարդ հասակակից լուսավորիչները էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում անցկացրեցին տեղեկատվական հանդիպումներ աշակերտների, ուսուցիչների, համայնքի առաջնորդների հետ: 2020 թվականին վերոհիշյալ նախագծերի շրջանակներում մարզիչների վարժանքներն ընթացան առցանց ռեժիմով (լրացուցիչ դիտեք՝ 1.3.3.14):

1.3.3.14 «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում Վրաստանի եվրոհետգրման գործընթացի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում

Տարվա ընթացքում շարունակվեց «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագիծը: Նախագիծը Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով

պետական նախարարի աշխատակազմի, արտաքին գործերի նախարարության, ՀԻԲՍ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համատեղ նախաձեռնությունն է և հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի» [PITA] շրջանակներում արդեն չորրորդ տարին իրականացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ: Նախագծի շրջանակներում հասակակից լուսավորիչների կողմից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե Ջավախեթի, Կախեթի) անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ դպրոցի վարչության, ուսուցիչների, աշակերտների հետ: 9 մունիցիպալիտետի 24 գյուղերում անցկացվեց 37 հանդիպում և 703 շահառուի հաղորդվեց տեղեկատվություն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի և դրանից բխող շահերի մասին:

Խնդիր. 1.3.4. Հանրային վարչարարության և հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման աճ և մասնագիտական զարգացում

1.3.4.1 „1+4“ ստաժավորման ծրագրի իրականացում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների հանրային ծառայությունում ընդգրկման բարելավման նպատակով, պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, 2017 թվականից իրականացվում է «1+4 ստաժավորման ծրագիր», որին մինչև օրս մասնակցել է մոտավորապես 300 շահառու: 2020 թվականին, կովիդ համավարակի պայմաններում հաստատված սահմանափակումներից ելնելով, ծրագրի իրականացումը ժամանակավորապես դադարեցվեց:

1.3.4.2 Քաղաքական մասնակցության մասին գիտակցության բարձրացման նպատակով մշակութային-կրթական միջոցառումների անցկացում. ցուցահանդեսներ, ֆիլմի ցուցադրում, բանավեճ

Բոլնիսի մունիցիպալիտետի համար նշանակալից է երիտասարդների զարգացումը, նրանց ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին: Տարվա ընթացքում կայացան տեղեկատվական/աշխատանքային հանդիպումներ Տալավեր, Նախիդուրի, Քվեմո Բոլնիսի և Դարբազի գյուղերի երիտասարդների հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվեցին մունիցիպալիտետի մասշտաբով պլանավորված միջոցառումները և դրանցում երիտասարդության ընդգրկման հնարավորությունը: Դրա հետ միասին, մունիցիպալիտետի վարչական տարածքային միավորներում պլանավորված է համայնքային երիտասարդական ակումբների ստեղծում:

Բոլնիսի մունիցիպալիտետի նախաձեռնությամբ, ՀԻԲՍ երիտասարդության հարցերով գործակալության ղեկավարը «Մունիցիպալային երիտասարդական

քաղաքականություն» նախագծի շրջանակներում, բոլնիսցի երիտասարդների և քաղաքապետին կից գործող երիտասարդական խորհրդի անդամների հետ անցկացրեց տեղեկատվական բնույթի հանդիպում: Նշված հանդիպմանը մասնակցում էր շուրջ 30 երիտասարդ, քննարկվեցին փաստաթղթի գոյության անհրաժեշտությունը, անվանվեցին ապագայի պլաններ:

1.3.4.3 Հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնության ընդգրկման աճի և մասնագիտական զարգացման նպատակով վարժանքների գնում

Դմանիսի մունիցիպալիտետում կոնկրետորեն էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների ընդգրկման աճի նպատակով առանձին բյուջե չի հատկացված, թեև մունիցիպալիտետի բյուջեում մասնագիտական զարգացման նպատակով նախատեսված է բյուջեի 1%:

1.3.4.4 Հանրային կառավարման և վարչարարության ծրագրի շրջանակներում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների վերապատրաստում

ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի կողմից, հաշվետու ժամանակաշրջանում, հանրային կառավարման և վարչարարության ծրագրի շրջանակներում, իրականացվեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի UNICEF-ի կողմից ֆինանսավորված նախագիծ՝ «Վաղ և նախադպրոցական կրթության համակարգին օժանդակություն և մարդկային կապիտալի զարգացում մունիցիպալիտետների հնարավորությունների զարգացման ճանապարհով վաղ և նախադպրոցական կրթության օրենքի և պետական չափորոշիչների գործադրմանը աջակցության համար», որի շրջանակներում վերապատրաստվեցին էթնիկ փոքրամասնության 7 ներկայացուցիչ, ինչպես նաև հանրային կառավարման և վարչարարության ծրագրով՝ էթնիկ փոքրամասնության 32 ներկայացուցիչ:

1.3.4.5 Մրցակցային ընտրություններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին հրավիրելու նպատակով համարժեք քարոզարշավի անցկացում, պետական լիազորի հետ «Բաց դռների օրվա» կազմակերպում

Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել COVID-19-ի տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

Միջանկյալ նպատակ. 1.4 Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության խրախուսում

Խնդիր. 1.4.1 էթնիկ փոքրամասնությունների կողմից ձայն տալու և տեղեկացված ընտրություն կատարելու ապահովում

1.4.1.1 Ընտրական փաստաթղթերի և այլ տեղեկատվական նյութերի թարգմանություն հայերեն և աղբրեջաներեն

Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրությունների համար, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներով հոծ բնակվող 7 մաժորիտարային ընտրատարածքում ստեղծվեց 348 ընտրական տեղամաս, այդ թվում՝ վրաց-աղբրեջանական՝ 211 ընտրական տեղամաս, վրաց-հայկական՝ 133 ընտրական տեղամաս, վրաց-հայկական-աղբրեջանական՝ 4 ընտրական տեղամաս:

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների հայալեզու և աղբրեջանալեզու ընտրողների համար, համապատասխան լեզուներով թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ ընտրական փաստաթղթերը և տեղեկատվական նյութերը. ըտրական քվեաթերթիկներ, ընտրողների միասնական ցուցակ, (*միասնական ընտրացուցակը տեղադրված էր նաև քվեարկության սենյակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք-էջի՝ voters.cec.gov.ge որոնման համակարգում*), քվեաթերթիկի լրացման կարգը, քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառ, ԿԸՀ-ի կայք-էջի ցուցապաստառ «էթնիկ փոքրամասնություններ»¹, ԿԸՀ-ի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի №38/2020 որոշումը «Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) առաջացած վարակի (COVID-19) տարածումը կանխարգելելու նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 31-ի Վրաստանի խորհրդարանի հերթական/սակրեբուլոնների միջանկյալ/քաղաքապետերի արտահերթ ընտրությունների քվեարկության օրվա որոշ ընտրական միջոցառումների և սանիտար-հիգիենիկ պահանջների սահմանման մասին», Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրություններում սայլակից օգտվող ընտրողի մասնակցության ժամանակավոր կարգ (ընտրական օրենսգիրք՝ հոդված 200), հետևյալ տեղեկատվական ֆլայերներ. «Ընտրական վարչության սպասարկումների մասին», «Գտի՛ր քո անձը, գտի՛ր քո տեղամասը», «Քվեարկության ընթացակարգեր», «ԿԸՀ-ի նախագահի դիմումը երիտասարդ ընտրողներին», ԿԸՀ-ի նախագահի հարցազրույցը (լրագրային ներդիր): Նյութեր տարածվեցին նաև հայալեզու «Վրաստան» թերթի և աղբրեջանալեզու «Գուրջիստան» թերթի միջոցով:

Հայալեզու և աղբրեջանալեզու ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների համար թարգմանվեցին (հայերեն և աղբրեջաներեն) և տպագրվեցին հետևյալ ձեռնարկների հրահանգները. ընտրական տեղամասային հանձնաժողովի անդամների ձեռնարկային հրահանգ, ընտրական տեղամասային հանձնաժողովի նախագահի հուշաթերթիկի հրահանգ, քվեարկության օրը ընտրական տեղամասային հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթներ, ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթներ, ընտրատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթներ,

¹ Դիտեք ԿԸՀ-ի կայք-էջի վրա ցուցապաստառ՝ « Էթնիկ փոքրամասնություններ» <https://cesko.ge/geo/list/2597>.

փոխադրական ընտրատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթներ, ուսումնական մոդուլ ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամների համար ընտրությունների անվտանգություն, ընտրական փաստաթղթերի կնիքումը պատկերող պաստառ, ուսումնական հրահանգ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար՝ օժանդակություն սահմանափակ կարողություններով ընտրողների անկախ մասնակցությանը ընտրություններին:

Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրությունների համար, ԿՀՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողները ընտրական հարցերի կապակցությամբ տեղեկատվություն ստանալ կարող էին հայալեզու և ադրբեջանալեզու օպերատորներից: Ջբաղված էին 2 հայերեն և 1 ադրբեջաներեն լեզուներին տիրապետող օպերատորներ:

1.4.1.2 ԿՀՀ-ի տեղեկատվական-գովազդային նյութերի հասանելիության ապահովում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով

Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրությունների առաջին փուլի համար, ԿՀՀ-ի կողմից պատրաստված 13 տեսահոլովակներ թարգմանվեցին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, այդ թվում պատրաստվեց տեսահոլովակ էթնիկ փոքրամասնություններին հասանելի սպասարկումների մասին: Հոլովակները տեղադրվեցին ԿՀՀ-ի կայք-էջին, սոցիալական ցանցում և տարածաշրջանային հեռուստատեսությունների եթերում: Ընտրությունների երկրորդ փուլի համար² պատրաստվեց երեք տեսահոլովակ, որոնք թարգմանվեցին ադրբեջաներեն³: ԿՀՀ-ն երկու փուլերի համար պատրաստեց նաև ռադիո հոլովակներ: Թարգմանված նյութը փոխանցվեց և տարածվեց հեռուստատեսությունների (հայալեզու. «Փարվանա տվ», «ԱՏՎ-12», «Տոկ-տվ», ադրբեջանալեզու. «Մառնեուլի ՏՎ», «Բոլնեյի», «Տվ-4») միջոցով: Նյութերը նաև տեղադրվեցին ռադիո եթերում: (Հայալեզու ռադիո. «Վրաստան-FM», «Նոր», ադրբեջանալեզու ռադիո. «Բոլնեյի», «Մառնեուլի», „AG FM“):

1.4.1.3 Փոքրաթիվ էթնիկ խմբերի հետ հանդիպումների կազմակերպում՝ «Զրուցում ենք ընտրողների հետ» իրազեկման քարոզչություն

Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրությունների համար, ընտրական վարչությունը Վրաստանի մասշտաբով, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում, իրականացրեց իրազեկման քարոզչություն «Զրուցում ենք ընտրողների հետ»:

² Խորհրդարանի ընտրությունների երկրորդ փուլը անցկացվեց այն տարածաշրջաններում, որտեղ էթնիկ ադրբեջանցիներ են բնակվում, ³ Հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանված տեսահոլովակները դիտեք հղումի վրա. https://cesko.ge/geo/video_gallery/show/1629/913;

Քարոզարշավի շրջանակներում, ընտրատարածքային հանձնաժողովների ներկայացուցիչները և կամավորները, էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետների կենտրոններում և գյուղերում, հասարակական կուտակման տեղերում, անցկացրեցին 39 ակցիա «Գտի՛ր քո անձը, գտի՛ր քո տեղամասը» խորագրով: Գործողության շրջանակներում քաղաքացիներին առաջարկեցին ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ (պլանշետով և արագ վճարման սարքերով), ընտրողների միասնական ցուցակում սեփական և ընտանիքի անդամների տվյալները վերստուգելու սպասարկում: Ադրբեջանալեզու ընտրողների հետ կայացավ 16 հանդիպում, իսկ հայալեզու ընտրողների հետ՝ 18 հանդիպում: Դրա հետ միասին, փոքրաթիվ էթնիկ խմբերի հետ կայացավ 5 հանդիպում, այդ թվում՝ քիստերի հետ՝ 2, ավարացիների հետ՝ 2 և գնչուների համայնքի ներկայացուցիչների հետ՝ 1 հանդիպում:

Քարոզարշավի շրջանակներում, գրանցման վայրի համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից նույնպես տարածվեցին հետևյալ տեղեկատվական ֆլայերները. «Գտի՛ր քո անձը, գտի՛ր քո տեղամասը», «Քվեարկության օրվա ընթացակարգեր», «ԿԸՀ-ի նախագահի դիմումը երիտասարդներին, որոնք Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրությունների համար դարձան 18 տարեկան»:

1.4.1.4 Դրամաշնորհային մրցույթի կազմակերպում

ԿԸՀ-ի կողմից սահմանված գերակայող ուղղություններին համապատասխան, ՀԻԻԱ- ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնը (Ուսումնական կենտրոն) 2020 թվականի փետրվարի 6-ին և հուլիսի 13-ին, հայտարարեց երկու դրամաշնորհային մրցույթ⁴: Ֆինանսավորման թիրախային խմբերից մեկը ներկայացնում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Նշված ուղղությամբ, դրամաշնորհային մրցույթային հանձնաժողովի որոշումների հիման վրա, ֆինանսավորվեց 19 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ, որոնք իրականացվեցին էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում⁵: Ֆինանսավորված նախագծերի ընդհանուր բյուջեն կազմեց 648 817.25 լարի⁶:

2020 թվականի փետրվարի 6-ին դրամաշնորհային մրցույթի համար ֆինանսավորման ուղղություններ սահմանվեցին.

⁴ Դրամաշնորհային մրցույթների ֆինանսավորման ուղղությունները սահմանվեցին ԿԸՀ-ի 2020 թվականի հունվարի 29-ի №3/2020 կարգադրությանը և հուլիսի 3-ի №41/2020 կարգադրությանը համապատասխան:

⁵ Նախագծերի թիրախային խումբ են ներկայացնում նաև Սահմանափակ կարողություններով անձինք, կանայք, երիտասարդներ,

⁶ Մանրամասն տեղեկատվություն դրամաշնորհային մրցույթի մասին դիտեք Ուսուցման կենտրոնի կայքէջին՝ <http://electionreforms.ge/geo/list/17>

1. օժանդակությունը քաղաքական կուսակցությունների ընտրական կարողությունների զարգացմանը: Նշված ուղղությամբ ֆինանսավորվեց 6 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ, ֆինանսավորման բյուջեն կազմեց 380 495 լարի,
2. երիտասարդ ընտրողը ընտրական գործընթացում: Նշված ուղղությամբ ֆինանսավորվեց 3 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ, որի ընդհանուր բյուջեն կազմեց 88 870 լարի:

2020 թվականի հուլիսի 13-ի դրամաշնորհային մրցույթի համար ֆինանսավորման ուղղություն է սահմանվել ընտրողների իրազեկումը 2020 թվականի Վրաստանի խորհրդարանի ընտրությունների մասին: Նշված ուղղությամբ ֆինանսավորվեց 10 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ, որի ընդհանուր բյուջեն կազմեց 179 452.25 լարի:

1.4.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար կրթական ծրագրերի իրականացում **«Ընտրական զարգացման դպրոց» 18-25 տարեկան երիտասարդների համար**

2020 թվականին ԿԸՀ-ն, ուսումնական կենտրոնի հետ համագործակցությամբ և ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ, իրականացրեց «Ընտրական զարգացման դպրոց» նախագիծը: 2020 թվականին, ուսումնական դասընթացի ծրագրին երեք նոր հարց ավելացավ. ձայն տալու էլեկտրոնային միջոցներ, ընտրություններ և ուսումնասիրություններ, ապատեղեկատվության և կեղծ տեղեկությունների տարածում ընտրական ժամանակաշրջանում⁷:

Նախագիծն իրականացվեց 2020 թվականի օգոստոսի 3-14-ն ընկած ժամանակաշրջանում, ք. Թբիլիսիում և 24 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող 3 մունիցիպալիտետում: 10-օրյա ուսումնական դասընթացը հաջողությամբ անցավ և վկայական ստացավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 49 մասնակից, այդ թվում 33 (67.35%) կին և 16 (32.65%) տղամարդ: Մանրամասն տեղեկատվությունը դիտե՛ք աղյուսակում:

⁷ Ուսումնական դասընթացի մասնակից 18-25 տարեկան երիտասարդները ծանոթացան հետևյալ հարցերին. պետական ինստիտուտների կազմակերպում, անմիջական ժողովրդավարության ձևեր, ընտրությունների օրենսդրական կարգավորում, միջազգային սկզբունքներ, Եվրոպայի խորհրդարան, միջազգային կազմակերպություններ, դիտարկում և ընտրական օժանդակություն, ընտրությունների պատմությունը և վիճակագրությունը Վրաստանում, 1919 թվականի հիմնադիր ժողովի ընտրություններ, ընտրական համակարգերը Վրաստանում, ընտրական վարչության մոդելներ, Վրաստանի ընտրական վարչություն, ընտրություններին ընդգրկված կողմեր, թափանցիկություն և հրապարակայնություն, ընտրական միջավայրի ինկլյուզացում, գենդերային հավասարություն, գենդերը և ընտրությունները, ընտրողների գրանցում, նախընտրական ժամանակաշրջան, ընտրատեղամասի բացում, ընտրատեղամասի փակում (հանրագումարում), ընտրական վեճեր, ընտրությունների հանրագումարում, ընտրական շրջանառության տեսություն:

Տարածք N	Տարածքի անվանում	Վկայագիր ստացածների թվաքանակ	Կին	Տղամարդ
18	Ախմետա	19	14	5
21	Գարդաբանի	0	0	0
22	Մառնեուլի	14	6	8
37	Ախալցխի	16	13	3
Ընդամենը		49	33 (67.35%)	16 (32.65%)

Տեղեկատվական-ուսումնական նախագիծ «Ընտրությունները և երիտասարդ ընտրողը» հանրային դպրոցների XI-XII դասարանների աշակերտության համար

«Ընտրությունները և երիտասարդ ընտրողը» տեղեկատվական-ուսումնական նախագծի իրականացումը հանրային դպրոցների XI-XII դասարանների աշակերտների համար նախատեսված էր 2020 թվականի մարտի 19-ից ապրիլի 8-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանում: Ընտրվեց 64 մունիցիպալիտետի 242 հանրային դպրոց: Այստեղից էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող 12 մունիցիպալիտետի 24 հանրային դպրոց, թեև կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով ընդունված միջոցառումներից էլնելով, հանրային դպրոցների նախագիծը չիրականացվեց:

Տեղեկատվական-ուսումնական նախագիծ «Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ»

ԿՀՀ-ն և ուսումնական կենտրոնը, 2020 թվականի հուլիսի 16-ից հուլիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակաընթացքում, 64 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող 13 մունիցիպալիտետում, իրականացրին տեղեկատվական-ուսումնական նախագիծ «Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ – ընտրատեղամասային հանձնաժողովների կարողունակ անդամների համար»: Նշված դասընթացը նախատեսում էր պրոֆիլային ուսուցում և նպատակաուղղված էր քաղաքացիական ընտրական գիտակցության բարձրացման և ընտրական վարչության որակյալ կադրային ռեսուրսի ձևավորման օժանդակությանը: Մասնակիցները ծանոթացան քվեարկության օրվա արարողակարգերին և ընտրատեղամասային հանձնաժողովի իրավասությանը պատկանող հարցերին:

Նախագծին հաջողությամբ ընդգրկվեց և վկայական ստացավ էթնիկ փոքրամասնություններով բնակվող 13 մունիցիպալիտետում բնակվող 1078 անձ, այստեղից 693 (64.29%) կին և 385 (35.71%) տղամարդ: Մանրամասն տեղեկատվությունը դիտեք աղյուսակում:

Մարզ N	Մարզի անվանում	Վկայական ստացածների թվաքանակ	Կին	Տղամարդ
11	Մազարեչո	108	92	16
18	Ախմետա	36	28	8
15	Լազոդեխի	64	58	6
17	Թելավի	95	88	7
21	Գարդաբանի	93	77	16
22	Մառնեուլի	161	38	123
23	Բոլնիսի	59	20	39
24	Դմանխի	93	45	48
25	Ծակա	87	40	47
26	Թերթիծղարո	69	59	10
37	Ախալցխի	81	72	9
40	Ախալքալաքի	72	40	32
41	Նինոծմինդա	60	36	24
Ընդամենը		1078	693 (64.29%)	385 (35.71%)

Ուսումնական դասընթաց «Ընտրական իրավունքի հարցերով» Ախալցխի համալսարանի ուսանողների համար

Ուսուցման կենտրոնը, 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում իրականացրեց ուսումնական դասընթաց «Ընտրական իրավունքի հարցերով» Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ուսանողների համար: Աշնանային սեմեստրում (2019 թվականի սեպտեմբեր-2020 թվականի հունվար) ուսումնական դասընթաց անցավ 23 ուսանող, այդ թվում 14 (60.87%) կին և 9 (39.13%) տղամարդ: Իսկ գարնանային սեմեստրում (2020 թվականի մարտ – հունիս), կորոնավիրուսի տարածման կանխման նպատակով ընդունված միջոցառումներից ելնելով համալսարանում ուսումնառությունն իրականացվեց հեռավար ռեժիմով և դասընթացին մասնակցեց 11 ուսանող, այդ թվում 9 (81.82%) կին և 2 (18.18%) տղամարդ:

Միջանկյալ նպատակ. 1.5. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար լրատվամիջոցների և տեղեկատվության հասանելիության բարելավում
Խնդիր. 1.5.1 Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրավորման և էլեկտրոնային/տպագիր լրատվամիջոցների հասանելիության ապահովում

1.5.1.1 Ոչվրացալեզու լրագրերի հրատարակություն (ադրբեջանալեզու «Գուրջիստան», հայալեզու «Վրաստան»)

Շարունակվեց ոչվրացալեզու տպագիր զանգվածային լրատվամիջոցներին օժանդակությունը: Տարվա ընթացքում պետության աջակցությամբ հրատարակվեցին հայալեզու ամենշաբաթյա «Վրաստան» (102 համար, 3800-4000 տպաքանակ) և ադրբեջանալեզու ամենշաբաթյա «Գուրջեստան» (56 համար, 2000 տպաքանակ) լրագրերը: Լրագրերը տարածվեցին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում, պատժակատարողական հաստատություններում: Հասարակության իրազեկման և կանխարգելիչ միջոցառումների թեմայով պատրաստվեցին ոչվրացալեզու լրագրերի՝ ադրբեջանալեզու «Գուրջիստանի» և հայալեզու «Վրաստանի» թողարկումներ (4500 տպաքանակ) և հատուկ լրացուցիչ խմբագրություն (6000 տպաքանակ), որտեղ տեղադրվեց ամբողջական տեղեկատվություն կորոնավիրուսի հետ կապված բոլոր ակտուալ հարցերի մասին:

1.5.1.2 Տարածաշրջանում ընթացող գործընթացների լուսաբանում պետական լիազորի վարչության և տեղական ինքնակառավարման կայք-էջի վրա, ինչպես նաև սոցիալական ցանցերում

Կախերթի երկրամասում պետական-լիազորի վարչության և տեղական ինքնակառավարումների կայք-էջերի վրա, ինչպես նաև սոցիալական ցանցերում ինտենսիվորեն լուսաբանվում էին տարածաշրջանում ընթացող գործընթացները:

1.5.1.3 Վրաստանի արևմտյան ինտեգրման գործընթացի մասին էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում իրազեկվածության աճի նպատակով մեդիա լուսաբանումներին օժանդակություն և համապատասխան մեդիա արտադրանքների պատրաստում

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԻԻԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը ակտիվորեն համագործակցում էր մեդիա ներկայացուցիչների հետ: Տարածաշրջանային մեդիային աջակցության ճանապարհով, Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման մասին հասարակության իրազեկվածության աճը կենտրոնի կարևոր ուղղություններից մեկն է: Հատկանշական է, որ էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում աշխատող հինգ տեղացի գործընկեր մեդիա միջոց Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում (TV Մառնեուլի, FM Մառնեուլի, FM NOR, ATV 12, TOK TV), 2020 թվականի ընթացքում, Վրաստանի արևմտյան ինտեգրման հարցերի կապակցությամբ պատրաստեց 40 բովանդակալից արտադրանք:

1.5.1.4 Աշխատանքի և զբաղվածության ոլորտում (աշխատանքային իրավունքներ) իրականացված և ընթացիկ բարեփոխումների մասին գիտակցության բարձրացման նպատակով լրատվության միջոցներում տեղեկատվության տեղադրում

2020 թվականի ընթացքում ակտիվություն չի իրականացվել, քանզի Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարի 2020 թվականի մարտի 4-ի № 01-73/Ե հրամանի համաձայն, զբաղվածության օժանդակության պետական գործակալությունը նոր կորոնավիրուսի (COVID-19) հնարավոր տարածումը կանխարգելելու նպատակով մարտի 13-ից ժամանակավորապես դադարեցրեց գործակալության գործունեության շրջանակներում նշանակված բոլոր զանգվածային և հանրային միջոցառումները:

1.5.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների ապահովում համապատասխան պետական հաղորդմամբ

Վրաստանի Արդարադատության նախարարությունը պատժակատարողական հաստատություններին, տեխնիկապես հնարավոր լինիտի շրջանակներում, բոլոր էթնոսի մեղադրյալ/դատապարտյալների համար ապահովում է հեռուստատեսային ալիքների հասանելիություն: Բացի դրանից, պատժակատարողական ծառայությունը հատուկ ապահովում է սատելիտային հաղորդմանը անվճար հասանելի հեռուստատեսային ալիքների միացումը:

Պատժակատարողական հաստատություններում 22 հեռուստատեսային ալիքի հաղորդում իրականացվում է 6 լեզվով. ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, ադրբեջաներեն, հայերեն և արաբերեն:

1.5.1.6 «Համացանց զարգացման համար» ծրագրի իրականացում

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի տնտեսական և կայուն զարգացման նախարարության ՀԻԻԱ Վրաստանի նորությունների և տեխնոլոգիաների գործակալության կողմից «Համացանց զարգացման համար» ծրագրի շրջանակներում, 2020 թվականի հունվարից առ դեկտեմբերի 20-ը ներառյալ, երկրի մասշտաբով տրվեց 581 համացանցային վաուչեր 126 000 լարի ընդհանուր արժողությամբ: Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում համացանցային վաուչերները բաշխվեցին հետևյալ կերպ.

- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 3 վաուչեր,
 - ❖ Կախեթի տարածաշրջան՝ 3 վաուչեր,
 - ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 18 վաուչեր:
- Ընդամենը տրվեց 24 վաուչեր:

Միջանկյալ նպատակ 1.6: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության ապահովում

Խնդիր. 1.6.1 «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության «Եվրոպական շրջանակային կոնվենցիայի» կատարման մասին հասարակության իրազեկվածության ապահովում

1.6.1.1 Տեղեկատվական հանդիպումներ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» եվրոպական շրջանակային կոնվենցիային ծանոթանալու նպատակով

Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և ընդգրկմամբ անցկացված հանդիպումների ժամանակ, ներկա հասարակությանը հաղորդվեց տեղեկատվություն էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի և դրա կատարման մասին:

Հանդիպմանը ինտերակտիվ ռեժիմում քննարկվում էին քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ ձեռքբերված առաջընթացը և դեռևս գոյություն ունեցող մարտահրավերները. ընդհանուր առմամբ տարվա ընթացքում կայացավ նմանատիպ շուրջ 10 հանդիպում:

1.6.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար Վրաստանի օրենսդրության և «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» եվրոպական շրջանակային կոնվենցիայի մասին տեղեկատվական վարժանքների և հանդիպումների անցկացում/ծանոթացում

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

Խնդիր. 1.6.2 Հանրային ծառայողների և էթնիկ փոքրամասնությունների թիրախային խմբերի գիտակցության բարձրացում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության ոլորտում

1.6.2.1 Վարժանքների անցկացում ներքին գործերի նախարարության իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար՝ խտրականության նշանով անհանդուրժողականության մոտիվով, այդ թվում էթնիկ նշանով կատարված հանցագործությունների կապակցությամբ: Վարժանքների շրջանակներում քննարկվում է մարդու իրավունքների պաշտպանության և հետաքննության որակի մոնիթորինգի դեպարտամենտի հանձնարարականը վերոնշյալ հարցի մասին

ԵԱՀԿ-ի ODIHR-ի և Եվրոպայի խորհրդի կողմից մշակված ուսումնական նյութերի համադրման հիման վրա, 2020 թվականի հունվարից սկսվեց Վրաստանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների կասկադային վերապատրաստման գործընթացը այլատյացությամբ մոտիվացված հանցագործության արդյունավետ նույնականացման և

հետաքննության թեմայով: Ուսումնական գործընթացում ընդգրկված են հոգեբաններ և տեղական ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կասկադային վարժանքների սերիայի շրջանակներում, 2020 թվականին, վարժանքների հիման վրա անցկացվեց 9 ուսումնական ակտիվություն (այդ թվում 5 հեռավար): Ընդհանուր առմամբ վերապատրաստվեց նախարարության տարբեր տարածքային մարմնի մոտավորապես 150-ից ավելի աշխատակից:

- ❖ 2020 թվականի հուլիսին և նոյեմբերին Վրաստանի ներքին գործերի նախարարության և Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում անցկացվեց 2 վարժանք խտրականության արգելման, աստելության լեզվի և կոնկրետ խտրականության նշանների հիման վրա կատարված հանցագործությունների հետաքննության թեմայով, վերապատրաստվեց շուրջ 30 քննիչ: Ուսումնառությունը հենվում է Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից պատրաստված ուսումնական նյութերի վրա, որոնց հիման վրա 2019 թվականին նախարարության աշխատակիցների համար անցկացվեց մարզիչների վարժանք: Ուսումնառությունը ներառում է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են. խտրականությունը և դրա տեսակները, աստելության լեզու, խտրականության մոտիվով կատարված հանցագործություններ, անհանդուրժողականության մոտիվի ցուցիչներ, հետաքննության չափորոշիչներ տեղական և միջազգային աղբյուրների համաձայն, կանանց նկատմամբ խտրականություն, սահմանափակ կարողության, ռասսայական, ազգային, էթնիկ, կրոնական, քաղաքական և այլ նշանով խտրականություն:
- ❖ 2020 թվականի երկրորդ կեսին Վրաստանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների կողմից, «Հավասարության շարժում» ոչկառավարական կազմակերպության նախաձեռնությամբ և «Բաց հասարակություն հիմնադրամի» (OSF) ֆինանսական աջակցությամբ աստելությամբ մոտիվացված հանցագործությունների նույնականացման և հետաքննության թեմայով անցկացվեց 2 վարժանք, որի շրջանակներում վերապատրաստում անցավ 30 աշխատակից: Վարժանքը ներառում էր այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են. աստելությամբ մոտիվացված հանցագործության հասկացություն և դրա հետ կապված հայեցակարգեր, աստելությամբ մոտիվացված հանցագործության հետաքննության ազգային և միջազգային պարտականություններ, խտրականության նշանով անհանդուրժողականության մոտիվի բացահայտումների համար նախատեսված հանգամանքներ, հետաքննիչի տուժյալի/վկայի հետ հարաբերության չափորոշիչներ, Վրաստանի ներքին գործերի նախարարության ձեռքբերումները և մարտահրավերները աստելությամբ մոտիվացված հանցագործության դեմ պայքարի ուղղությամբ, աստելությամբ մոտիվացված հանցագործության կանխարգելում և այլն:
- ❖ 2020 թվականին, աստելությամբ մոտիվացված հանցագործությունների հետաքննության թեմայով Եվրոպայի խորհրդի HELP հեռավար ուսուցման դասընթաց անցավ Վրաստանի ներքին գործերի նախարարության 15 աշխատակից:
- ❖ Բացի դրանից, Վրաստանի ներքին գործերի նախարարության 4 աշխատակից մասնակցեց Եվրոպայի խորհրդի կողմից HELP հարթակի կիրառմամբ

իրականացված առցանց դասընթացին «Ռասիզմի, այլատյացության, հոմոֆոբիայի և տրանսֆոբիի դեմ պայքար» թեմայով: Եվրամիության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ (UNDP) և կանանց նախաձեռնություններին աջակցող խմբի նախաձեռնությամբ (WISG), «Մարդու իրավունքները բոլորի համար» նախագծի շրջանակներում, Վրաստանի ներքին գործերի նախարարության վկային և տուժյալին համակարգողների համար անցկացվեց հեռավար վարժանք: Վարժանքի թեմա էր ներկայացնում բռնությունը և խտրականությունը սեռական և գենդերային կողմնորոշման հիման վրա:

- ❖ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին, Վրաստանի ներքին գործերի նախարարության մարդու իրավունքների պաշտպանության և հետաքննության որակի մոնիթորինգի դեպարտամենտի ներկայացուցիչների կողմից նախարարության համապատասխան բաժանմունքների մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատու աշխատակիցների համար անցկացվեց առցանց ուսուցում գենդերային հավասարությանը համարժեք (ռելեվանտային) հարցերի կապակցությամբ:

Դրա հետ միասին հատկանշական է այն, որ ՀԻԻԱ Վրաստանի ներքին գործերի նախարարության ակադեմիայում մարդու իրավունքների ուսուցման ժամանակ քողարկվում է այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է խտրականության արգելումը, որը ներառում է հակախտրականության օրենսդրության, այդ թվում «խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» օրենքի ուսուցումը: Մինևույն ժամանակ խտրականության արգելումն ուսուցանելիս՝ քննարկվում են տարբեր պաշտպանվածության հիմքեր, ինչպիսին են. սեռը, կրոնը, սեռական կողմնորոշումը, էթնիկ պատկանելությունը և այլն: Նշված թեմայով 2020 թվականի ընթացքում պատրաստվեցին/վերապատրաստվեցին.

- ❖ ոստիկանների բազիսային պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագրով՝ 158 ունկնդիր,
- ❖ սահմանապահ-ստուգողի որակավորում շնորհող կրթական դասընթաց՝ 18 ունկնդիր,
- ❖ սահմանապահ-ստուգողների որակավորման բարձրացման վարժանք՝ 32 ունկնդիր,
- ❖ Վրաստանի սահմանապահ ոստիկանության ցամաքային սահմանի պաշտպանության դեպարտամենտի սահմանապահների պատրաստման հատուկ մասնագիտական կրթական ծրագիր՝ 53 ունկնդիր,
- ❖ Ժամանակավոր տեղավորման մեկուսարանների աշխատակիցների պատրաստման-վերապատրաստման ուսումնական դասընթաց՝ 19 ունկնդիր,
- ❖ Վրաստանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների պաշտոնների բարձրացման կրթական ծրագիր՝ 53 ունկնդիր,
- ❖ քննիչների որակավորման բարձրացման դասընթաց՝ 36 ունկնդիր:

2020 թվականի հուլիսի տվյալներով անցկացվեց 6 վարժանք: Վերապատրաստվեց 111 իրավապահ:

1.6.2.2 Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածքային միավորումներում Ներքին գործերի նախարարության կողմից առաջարկված սպասարկումների մասին տեղեկատվական բնույթի հանդիպումների անցկացում

Վրաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը մասնակցություն ունեցավ հանդիպմանը, որը վերաբերում էր համավարակի ժամանակ էթնիկ նշանով խտրականության դեպքերին: Հանդիպումն անցկացվեց «Ժողովրդավարական ընդգրկման կենտրոն» ոչկառավարական կազմակերպություն աջակցությամբ: Հանդիպման շրջանակներում, բազմաթիվ այլ կարևոր հարցերի հետ միասին, Վրաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցչի կողմից քննարկվեցին էթնիկ նշանով խտրականության դեպքերը և դրանց նկատմամբ նախարարության արձագանքը: Մասնավորապես, ինչ իրավական մեխանիզմներ գոյություն ունեն և ինչ սպասարկումներ է առաջարկում նախարարությունը նման փաստերին արդյունավետ արձագանքելու համար:

1.6.2.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար կլոր սեղանի ձևաչափով հանդիպման անցկացում, իրենց իրավունքներին և հնարավորություններին ծանոթանալու նպատակով

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

1.6.2.4 Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության մասին հատուկ պատժակատարողական ծառայության աշխատակիցների գիտակցության բարձրացում վարժանքների և տեղեկատվական հանդիպումների անցկացման ճանապարհով

2019 թվականի հունվարից ՀԻԻԱ «Վրաստանի արդարադատության ուսումնական կենտրոն» հատուկ պատժակատարողական ծառայության ուղեկցորդության (Էսկորտիբության) և հատուկ միջոցառումների պահակախմբի սպաների համար կազմակերպվում է «Պահակախմբի սպաների կողմնորոշման դասընթացը»: Դասընթացի շրջանակներում ինտեգրված է 5-7-ժամանոց վարժանք «Ի՛նչ է խտրականությունը»: Վարժանքը առավելագույնս նախատեսում է նպատակային խմբի առանձնահատկության և գործունեության յուրահատկությունները: 2020 թվականին հատուկ պատրաստության դասընթաց անցավ պահակախմբի 21 սպա (1 խումբ): Նշված դասընթացի անցկացումը լրացուցիչ նշված ֆոկուս խմբի համար անհնար դարձավ գլոբալային համավարակի պատճառով:

1.6.2.5 Վարժանքների ծառայության գնում/տեղեկատվական հանդիպումների անցկացում

Դմանիսի մունիցիպալիտետում պլանավորվեց վարժանք ծառայության գնում, վարժանքի պլանի հաստատում, թեև նշված միջոցառումը չի կատարվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

**Ռազմավարական նպատակ 2
Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում**

Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում շարունակվեց ենթակառուցվածքների նախագծերի իրականացումը (գազիֆիկացիա, ներքին ճանապարհների, ոռոգման և խմելու ջրի համակարգերի, դրսի լուսավորության վերականգնում և այլն):

Կայացան տեղեկատվական/գիտակցության բարձրացման քարոզարշավներ, այդ թվում կրթության նորույթների, եվրոպական ինտեգրման գործընթացից բխող շահույթի, կորոնավիրուսի հետ կապված հարցերի մասին:

Միջանկյալ նպատակ 2.1. Օժանդակություն սոցիալական և տարածաշրջանային շարժունակությանը

Խնդիր 2.1.1 Օժանդակություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տնտեսական վիճակի բարելավմանը

2.1.1.1 Տեղեկատվական քարոզչության վարում պետական սպասարկումների և ծրագրերի մասին

Տես՝ ակտիվություն 1.3.3.3

2.1.1.2 Ենթակառուցվածքային աշխատանքների իրականացում

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ համագործակցային ակտիվությանը համապատասխան, Կախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ախմետա, Լագոդեխի) Վրաստանի տարածաշրջաններում իրականացված նախագծերի հիմնադրամի և Վրաստանի մունիցիպալային հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 37 նախագիծ 16 122 600 լարի ընդհանուր արժողությամբ:

2.1.1.3 Կին ձեռներեցների համաֆինանսավորում միկրո դրամաշնորհների ծրագրի շրջանակներում

ՀԻԻԱ «Արտադրի'ր Վրաստանում» միկրո և փոքր ձեռներեցությանը օժանդակության ծրագիր հայտարարվեց 2020 թվականի հոկտեմբերի 5-ին, որի շրջանակներում մուտքագրվեց ընդամենը 26307 հայտ: Ծրագրի շրջանակներում, հաջորդ փուլ անցավ 4103 դիմող: Վարժանքների փուլ անցած 4103 շահառուից 2056 (50.1%)-ը կին է: Առայժմ դեռևս չեն բացահայտվել հաղթած շահառուները, համապատասխանաբար, նշված ակտիվության իրականացումը 2020 թվականի դրությամբ չի ավարտվել:

2.1.1.4 Ճանապարհների վերականգնում (Կախերթի տարածաշրջան), մանկապարտեզի վերակառուցում (Կախերթի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ ֆինանսավորվեց ճանապարհի վերականգնման 28 նախագիծ Ախմետայի և Լագոդեխի մունիցիպալիտետներում, ընդհանուր արժողությունը՝ 9 173 187 լարի: Այստեղից, տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 8 631 111 լարի,
- ❖ **ավարտվեց** 23 նախագիծ, ընդհանուր արժողությունը՝ 8 316 525 լարի: Այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում՝ 7 802 277 լարի:

Անցկացվեց 31 534 գծային մետր ճանապարհ, որից կօգտվի շուրջ 110 000 շահառու: **Ընթանում է** 5 ճանապարհային նախագծի վերականգնում, ընդհանուր արժողությունը՝ 856 662 լարի: Այստեղից, տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 828 834 լարի, նախագծի ավարտին վերականգնված կլինի 5 305 գծային մետր ճանապարհ, որից կօգտվի 20 260 շահառու:

- ❖ Ախմետայի մունիցիպալիտետում ընթանում է մանկապարտեզի վերականգնման 1 նախագիծ, 760 067 լարի արժողությամբ: Այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 722 064 լարիով, մանկապարտեզի 81 շահառու,
- ❖ ավարտվեց մանկապարտեզի վերականգնման 2 նախագիծ ք. Լագոդեխիում և Զեմո Խոդաշենի գյուղում (Ախմետայի մունիցիպալիտետ), ընդհանուր արժողությունը 908 942 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 863 494 լարի: Կօգտվի 150 շահառու,
- ❖ մանկապարտեզի վերականգնման 3 նախագիծ ք. Դմանիսիում և Գանթիադի գյուղում (Քվեմո Քարթլի), 1 770 057 լարի արժողությամբ (տարածաշրջանային զարգացման հիմնադրամ- տոհմ՝ 1 513 495 լարի), կօգտվի 200 շահառու,
- ❖ ընթանում է մանկապարտեզի վերականգնման 3 նախագիծ Ախալցխիում և Ախալքալաքում (Ծուղորոթ, Սխվիլիսի և Գոգաշեն գյուղերում), 638 000 լարի արժողությամբ (տոհմ-ի շրջանակներում 600 053 լարի), կօգտվի 3 600 շահառու,

2.1.1.5 Ճանապարհների վերականգնում (Քվեմո Քարթլիի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերության ակտիվությանը համապատասխան, Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ռուսթավի, Բոլնիսի, Դմանիսի, Գարդաբանի, Թեթրիձղարո, Մառնեուլի, Շալկա) ընթանում են և իրականացվեցին հետևյալ նախագծերը.

- ❖ Վրաստանի տարածաշրջաններում իրականացվելիք նախագծեր և հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց ճանապարհի վերականգնման 58 նախագիծ, 34 511 639 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 30 458 601 լարի,
- ❖ **ավարտվեց** 35 նախագիծ 20 835 219 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 18 074 708 լարի, զգվեց 66 047 գծային մետր ճանապարհ, որից կօգտվի 62 800 շահառու:
- ❖ **Ընթանում է** 23 ճանապարհային նախագծի վերականգնում, ընդհանուր արժողությունը 13 676 420 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 12 383 893 լարի, վերականգնված կլինի 33 682 գծային մետր, որից կօգտվի 32 131 շահառու:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց ճանապարհի վերականգնման 2 նախագիծ Դմանիսի և Շալկայի մունիցիպալիտետներում, (5 752 գծային մետր) 1 076 855 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 1 023 012 լարի, որից կօգտվի 2 232 շահառու:

2.1.1.6 Զբոսապուրակի վերականգնում (Քվեմո Քարթլիի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերությամբ ավարտվեց զբոսապուրակի վերականգնման նախագիծը Ռուսթավիում, 1 775 831 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 1 687 038 լարի, որից կօգտվի 62 354 շահառու:

Բացի պլանով նախատեսված նախագծից, լրացուցիչ ֆինանսավորվեց և ընթանում է զբոսապուրակի վերականգնման 2 նախագիծ ք. Ռուսթավիում, 200 000 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի ֆինանսավորումը կազմեց 190 000 լարի, որից էլ կօգտվի 24 000 շահառու:

2.1.1.7 Զբանցքների վերականգնում (Քվեմո Քարթլիի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ **ավարտվել է** ջրանցքի 1 նախագիծ (940 գծային մետր) Ռուսթավիում, 461 663 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 438 580 լարի, որից կօգտվի 5500 շահառու:
- ❖ **Ընթանում է** ջրանցքների 1 նախագիծ (910 գծային մետր) Դմանիսի մունիցիպալիտետում, 161 770 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 153 682 լարի, որից օգտվեց շուրջ 150 շահառու, ինչպես նաև ընթանում է ջրանցքի կարգավորում Բոլնիսի մունիցիպալիտետի Բոլնիս գյուղում:

2.1.1.8 Շենքերի արտաքին տեսքի վերանորոգում (Քվեմո Քարթլիի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ **ավարտվեց ք.** Ռուսթավիում ավտոբուսների կանգառի և օժանդակ շինությունների սարքավորման նախագիծը: Ընդհանուր արժողությունը՝ 1 138 825 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 1 051 246 լարի, որից կօգտվի մինչև 120 000 շահառու:
- ❖ **Ընթանում են** Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում հասարակական կենտրոնի շենք-շինության և ք. Ռուսթավիում երաժշտական դպրոցի վերականգնման աշխատանքներ, 2 նախագծի ընդհանուր արժողությունը 400 061 լարի է, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 380 058 լարի, որից կօգտվի մոտավորապես 5 900 շահառու:
- ❖ Բոլնիսի մունիցիպալիտետի Քվեմո Բոլնիսի, Սավանթի և Դարբազ գյուղերում ընթանում են ամբուլատորային շենքի վերականգնման աշխատանքներ:

2.1.1.9 Ջրի վերականգնման նախագիծ (Քվեմո Քարթլիի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ ավարտվեց ջրամատակարարման 1 նախագիծ (9 287 գծային մետր) Մառնեուլիի մունիցիպալիտետի գյուղերում (Ալգեթի, Թազաքենդի, Ազիզքենդի, Գաջիսաքենդի, Քուրիարի, Ամբարովկա, Քեշալո) ընդհանուր արժողությունը 2 677 409 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 2 543 537 լարի, որից կօգտվի շուրջ 4000 շահառու:
- ❖ Ավարտվեց ջրամատակարարման 2 նախագիծ (4735 գծային մետր) Լագոդեխի մունիցիպալիտետի գյուղերում (Յոդնիսկարի, Արեշվերանի), 477 778 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 443 412 լարի, որից կօգտվի շուրջ 400 շահառու:

- ❖ Ընթանում է ջրամատակարարման 3 նախագիծ (17 500 գծային մետր և 2 ջրհոր) Դմանիսի և Թեթրիձղարոյի մունիցիպալիտետներում, 2 663 879 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 2 476 798 լարի, որից կօգտվի շուրջ 1 950- շահառու:
- ❖ Ընթանում է ջրամատակարարման 2 նախագիծ (4 109 գծային մետր) Ծալկայի մունիցիպալիտետի գյուղերում (Բարալեթի, Լիվադի, Իմերի, Սաբեճիսի), 210 526 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 200 000 լարի, որից կօգտվի շուրջ 3 334- շահառու:

Բոլնիսի մունիցիպալիտետի Տալավերի գյուղում ընթանում են ջրամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքներ: Ինչպես նաև ընթանում է խմելու ջրի համակարգի վերանորոգում Ակաուրթա, Գետա, Սամծվերիսի, Փոլադաուրի, Դարբազի, Տալավերի գյուղերում:

2.1.1.10 Ճանապարհների վերականգնում (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում (Ախալցխիսե, Ադիգենի, Ասպինձա, Ախալքալաքի, Բորջոմի, Նինոծմինդա) իրականացվեցին հետևյալ նախագծերը.

- ❖ Վրաստանի տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց ճանապարհային վերականգնման 53 նախագիծ (անցկացվեց 78 527 գծային մետր), 31 400 045 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 29 420 906 լարի, որից էլ կօգտվի մինչև 50 000 շահառու:
- ❖ **Ավարտվեց** 48 նախագիծ (անցկացվեց 69 979 գծային մետր ճանապարհ), 28 164 218 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 26 358 453 լարի, որից կօգտվի մոտավորապես 39 500 շահառու:
- ❖ **Ընթանում է** 5 ճանապարհային վերականգնման նախագիծ (8 548 գծային մետր) ընդհանուր արժողությունը 3 235 827 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 3 062 453 լարի, որից էլ կօգտվի շուրջ 10 500 շահառու:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց ճանապարհի վերականգնման 4 նախագիծ (Ադիգենի, Ասպինձա, Բորջոմի, Նինոծմինդա), (5 440 գծային մետր), 1 475 532 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից լեռան հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 1 391 548 լարի, որից կօգտվի շուրջ 12 000 շահառու:

2.1.1.11 Ջրհեղեղային ջրանցքների վերականգնում (Մամջիսե-Ջավախեթի) տարածաշրջան

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերությամբ, Ախալցխիսեի մունիցիպալիտետում ընթանում է ջրհեղեղային ջրանցքների վերականգնման 1 նախագիծ (107 գծային մետր) ընդհանուր արժեքը 428 403 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 406 982 լարի, որից կօգտվի շուրջ 17 500 շահառու:

2.1.1.12 Ջրի վերականգնման նախագիծ (Մամջիսե-Ջավախեթի)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերությամբ իրականացվեցին հետևյալ նախագծերը.

- ❖ ավարտվեց ջրամատակարարման 1 նախագիծ (Ասպինձա, 1 100 գծային մետր), ընդհանուր արժողությունը 503 805 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 464 409 լարի, որից կօգտվի 3 գյուղի (Խիզաբավրա, Սարո, Վարգավի) մինչև 800 շահառու,
- ❖ ավարտվեց ջրամատակարարման 2 նախագիծ (սարքավորվեց 11 700 գծային մետր ջրմուղ և մեկ ջրամբար), Ախալքալաքի և Ախալցխիսեի մունիցիպալիտետների գյուղերում (Խոթենիա, Փոքր Ծիրա), ընդհանուր արժողությունը՝ 1 036 407 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 530 094 լարի, որից կօգտվի շուրջ 760 շահառու:
- ❖ Ընթանում է ջրամատակարարման 4 նախագիծ (27 300 գծային մետր), Ախալցխիսեի մունիցիպալիտետի գյուղերում (Օնիսի, Թիսելի, Մուգարեթի, Անի), ընդհանուր արժողությունը՝ 649 903 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 617 907 լարի, որից կօգտվի մոտավորապես 3 920 շահառու:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամից ֆինանսավորվեց և ավարտվեց ջրամատակարարման 1 նախագիծ (12 500 գծային մետր) ք. Ախալքալաքի Վարևանի գյուղում, ընդհանուր արժողությունը 654 321 լարի, այստեղից լեռնային հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 475 351 լարի, որից կօգտվի մոտավորապես 750 շահառու:
- ❖ Ընթանում է ջրամատակարարման 1 նախագիծ (31 144 գծային մետր) Ախալցխիսեի մունիցիպալիտետի գյուղերում (Ճվինթա, Էլիածմինդա, Օուրրութ և Կլդե), ընդհանուր արժողությունը 570 247 լարի, այստեղից լեռնային հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 500 000 լարի, որից կօգտվի մոտավորապես 3 000 շահառու:

2.1.1.13 Շենքերի արտաքին տեսքի վերականգնում (Մամջիսե Ջավախեթի)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ ավարտվեց բազմաբնակարանոց շենքերի վերականգնման 1 նախագիծ (վերականգնման աշխատանքներ անցկացվեցին 10 շենքի վրա) ք. Ախալցխիսում, ընդհանուր արժողությունը 1 001 105 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 951 108 լարի, որից կօգտվի մոտավորապես 150 000 շահառու:
- ❖ Ընթանում է բազմաբնակարանային շենքերի վերականգնման 2 նախագիծ Բորջոմիում, ընդհանուր արժողությունը 384 315 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 365 099 լարի, որից կօգտվի մոտավորապես 1000 շահառու:

2.1.1.14 Մշակութային օբյեկտների վերականգնում (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան.

- ❖ ավարտվեց մշակույթի տան վերականգնման 2 նախագիծ Բորջոմիում (2 շենքի վրա անցկացվեցին վերականգնողական աշխատանքներ), ընդհանուր արժողությունը 925 326 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 853 128 լարի, որից կօգտվի մոտավորապես 380 շահառու:
- ❖ Ավարտվեց մշակույթի տան վերականգնման 1 նախագիծ Ախմետայում (գյուղ Օմալ), վերականգնողական աշխատանքներ անցկացվեցին 1 շենքի վրա, ընդհանուր արժողությունը 182 999 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 173 849 լարի, որից կօգտվի մոտավորապես 250 շահառու:
- ❖ Ընթանում է Մատանիի մշակույթի տան վերականգնման նախագիծ, (1 շենք), ընդհանուր արժողությունը 324 767 լարի, որից կօգտվի 250 շահառու:

2.1.1.15 Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ՈՌԻԱ Բաթումի «Բարեկամության տուն» մշակույթի կենտրոնում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մունիցիպալիտետի տնտեսական քաղաքականության և 2020-2021թթ. գործնական պլանի ծանոթացում

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

2.1.1.16 Բոլնիսի և Դմանիսի մունիցիպալիտետներում գեղագիտական, ստեղծագործական, մասնագիտական և կրթական ծրագրերի իրականացում

Դմանիսի մունիցիպալիտետում գեղագիտական/կրթական ծրագրերը իրականացվեցին մասնակիորեն.

- ❖ մշակույթի և արվեստի կենտրոնի 2020 թվականի բյուջե՝ 363 000 լարի տեղական բյուջե, ինչպես նաև սեփական եկամուտներ
- ❖ Ո(ո)ԻԱ Դմանիսի երաժշտական դպրոց՝ 104 800 լարի՝ տեղական մունիցիպալային բյուջե (վարկավորում), այդ թվում սեփական եկամուտ,
- ❖ Ո(ո)ԻԱ Դմանիսի կրթական կենտրոն՝ 81 000 լարի տեղական բյուջե
- ❖ Ո(ո)ԻԱ Դմանիսի նախադպրոցական դաստիարակության ծառայություն՝ 637200 լարի՝ տեղական բյուջե
- ❖ Ո(ո)ԻԱ Դմանիսի գրադարանային ծառայություն՝ 100 000 լարի՝ տեղական բյուջե

2.1.1.17 Ենթակառուցվածքային աշխատանքների իրականացում տրանսսահմանային տնտեսական կապերի հզորացման օժանդակություն

Ք. Ռուսթավլիի քաղաքապետարանի կողմից նշված ակտիվությունը չի իրականացվել

2.1.1.18 Ադիգենի ավանի ջրամատակարարման համակարգի վերականգնողական աշխատանքներ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, ավարտվեցին Ադիգենի ավանի ջրամատակարարման համակարգի վերականգնողական աշխատանքները, որի շրջանակներում սարքավորվեց մինչև 20 կիլոմետրանոց ջրատար խողովակների ցանց, 258 հատ հաշվարկային հանգույց, 700ձ3-անոց ամբարտակ և ջրամաքրման շինություն: Նախագծի ընդհանուր արժողությունը 2 362 982,92 լարի, որից կօգտվի մոտավորապես 800 շահառու:

2.1.1.19 Վալեի ջրամատակարարման համակարգի վերականգնման շինարարական աշխատանքներ (Սամցխե Ջավախեթի)

Վրաստանի տարածաշրջանային զարգացմանը և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, ընթանում են Վալեի ջրամատակարարման ցանցի վերականգնողական աշխատանքներ, որի շրջանակներում այս փուլում սարքավորված է մինչև 50 կիլոմետր ջրամատակարարման հանգույց, 800 հատ հաշվարկային հանգույց, 8 միավոր հորատանցք և ավարտման փուլում է 2 հատ 500ձ3- անոց ջրամբարի շինարարությունը: Պայմանագրային արժողությունը կազմում է 5 361 945,17 լարի, պայմանագրում ներառված են փոփոխություններ և շինարարական աշխատանքների ավարտման ժամկետ սահմանվեց 2021 թվականի փետրվարի 26-ը: Շահառուների թվաքանակը 3700 է:

2.1.1.20 Ք. Մառնեուլիում, Իադլուջի բնակավայրում 31 շահառուի համար ջրատար խողովակի և կոյուղիների դրսի ցանցերի սարքավորման աշխատանքներ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, ավարտվեցին ք. Մառնեուլիում, Իադլուջի բնակավայրում 31 շահառուի համար ջրախողովակի և կոյուղիների դրսի ցանցերի սարքավորման աշխատանքները, որի շրջանակներում սարքավորվեց պոլիէթիլենային մայրուղային խողովակ 3120 գծային մետր, պոլիէթիլենի բաշխիչ ցանց 220 մետր, 31 հատ հաշվարկային հանգույց, կոյուղային գոֆրիացված խողովակ մինչև 2500 մետր և 80 հատ կոյուղու կուլեկտորային բյուրեղացնող երկաթ-բետոնի ջրհոր: Շինարարական աշխատանքների ընդունման-հանձնման ակտը ձևակերպվեց 2020 թվականի սեպտեմբերի 17-ին, նախագծի ամբողջական արժողությունը, տեսչական մարմնի եզրակացության համաձայն, կազմեց 729 324,94 լարի:

2.1.1.21 Ադիգենի մունիցիպալիտետի Մոխե գյուղի դպրոցի վերականգնում

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Ադիգենի մունիցիպալիտետի Մոխի գյուղի հանրային դպրոցի վերականգնողական աշխատանքներն ավարտվեցին, ձևակերպվեց ընդունման-հանձնման ակտ: Դպրոցը կսպասարկի 160 աշակերտի, նախագծումը կազմում էր 39 985 լարի, շինարարությունը՝ 1 644 404,50 լարի:

2.1.1.22 Ախալքալաքի մունիցիպալիտետի Չունչխա գյուղի մեկ պայմանագրի շրջանակներում Design-Build մեթոդով 90 աշակերտի հաշվարկով հանրային դպրոցի նախագծում և շինարարություն

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, ավարտվեցին Ախալքալաքի մունիցիպալիտետի Չունչխա գյուղի հանրային դպրոցի շինարարական աշխատանքները: Ընթանում են ընդունում-հանձնում ձևակերպելու համար անհրաժեշտ ընթացակարգերը: Դպրոցը հաշվարկված է 90 աշակերտի վրա: Նախագծում-շինարարությունը՝ 1 883 752 լարի:

2.1.1.23 Նինոծմինդայի մունիցիպալիտետի Օրլովկա գյուղի մեկ պայմանագրի շրջանակներում Design-Build մեթոդով 90 աշակերտի վրա հաշվարկված հանրային դպրոցի նախագծում/շինարարություն

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Նինոծմինդայի

մունիցիպալիտետի Օրլովկա գյուղի հանրային դպրոցի նախագծման աշխատանքներն ավարտվեցին, ակտիվորեն ընթանում են շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2021 թվականին: Դպրոցը հաշվարկված է 90 աշակերտի վրա, նախագծում-շինարարությունը՝ 1 882 100 լարի:

2.1.1.24 Մեկ պայմանագրի շրջանակներում Design-Build մեթոդով Լագոդեխի մանկապարտեզի նախագծում/շինարարություն: (Կախեթի) մունիցիպալիտետի Թելավի, Բախուրանի և Կարթուրանի գյուղերում 50 երեխայի հաշվարկով մանկապարտեզի նախագծում/կառուցում:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Լագոդեխի մունիցիպալիտետի Թելավի, Բախուրանի և Կարթուրանի գյուղերում ընթանում է մանկապարտեզների շինարարություն: Աշխատանքները կավարտվեն 2021 թվականին, նախագծում-շինարարությունը՝ կկազմի 2 286 840 լարի:

2.1.1.25 Մառնեուլի մունիցիպալիտետի Ծոփ գյուղում 150 աշակերտի համար նախատեսված հանրային դպրոցի նախագծում/շինարարություն

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Մառնեուլի մունիցիպալիտետի Ծոփ գյուղի հանրային դպրոցի նախագծումն ավարտվեց, ակտիվորեն ընթանում են շինարարական աշխատանքները: Դպրոցը հաշվարկված է 150 աշակերտի վրա: Նախագծում-շինարարությունը կազմում է 2 395 943 լարի: Աշխատանքները կավարտվեն 2021 թվականին:

2.1.1.26 Ք. Ծալկայի 90 աշակերտի վրա հաշվարկված №1 հանրային դպրոցի նախագծում/շինարարություն

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Ծալկայի մունիցիպալիտետի N1 հանրային դպրոցի (Կոխտայի տարրական դպրոց) նախագծումն ավարտվեց, ակտիվորեն ընթանում են շինարարական աշխատանքները: Դպրոցը նախատեսված է 90 աշակերտի հաշվով: Նախագծում-շինարարությունը՝ 1 782 350 լարի: Աշխատանքները կավարտվեն 2021 թվականին:

2.1.1.27 Քվենո Բոլնիսի գյուղում 60 աշակերտով №1 հանրային դպրոցի նախագծում/շինարարություն (Զվարեթի բազային)

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Բոլնիսի մունիցիպալիտետի Քվեմո Բոլնիսի գյուղի N1 հանրային դպրոցի (Զվարեթի բազային) շինարարական աշխատանքներն ավարտվեցին: Ձևակերպվեց ընդունման-հանձնման ակտ: Դպրոցը հաշվարկված է 60 աշակերտի վրա: Նախագծում-շինարարությունը՝ 1 087 487 լարի:

2.1.1.28 Ախմետայի մունիցիպալիտետում Դուխի գյուղի (Օինուբանիին միավորված) մեկ պայմանագրի շրջանակներում Design-Build մեթոդով 90 աշակերտի վրա հաշվարկված հանրային դպրոցի նախագծում և կառուցում

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Ախմետայի մունիցիպալիտետի Դուխի գյուղի հանրային դպրոցի (Օինուբանի հանրային դպրոցին միավորված) նախագծումն ավարտվեց, ավարտման են մոտենում շինարարական աշխատանքները: Դպրոցը նախատեսված է 90 աշակերտի վրա, նախագծում-շինարարությունը՝ 2 008 000 լարի:

2.1.1.29 Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղում մեկ պայմանագրի շրջանակներում Design-Build մեթոդով 60 աշակերտի վրա հաշվարկված հանրային դպրոցի նախագծում/շինարարություն

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության հետ գործընկերային ակտիվությանը համապատասխան, Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղի հանրային դպրոցի նախագծումն ավարտվեց, ընթանում են շինարարական աշխատանքները: Շինարարությունը կավարտվի 2021 թվականին: Դպրոցը նախատեսված է 60 աշակերտի հաշվով: Նախագծում-շինարարությունը՝ 1 160 000 լարի:

Տեղեկատվություն լրացուցիչ ֆինանսանսավորված նախագծերի մասին

Բացի պլանով նախատեսված նախագծերից, լրացուցիչ

- ❖ ավարտվեց դրսի լուսավորության 1 նախագիծ (15 000 գծային մետր) Նինոծմինդայում, ընդհանուր արժողությունը 154 547 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց՝ 90 605 լարի, որից կօգտվի շուրջ 20 000 շահառու:
- ❖ Ընթանում է կամրջի սարքավորման 1 նախագծի իրականացում Ասպինձայում (70 գծային մետր) ընդհանուր արժողությունը 77 604 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց՝ 73 724 լարի, որից կօգտվի շուրջ 70 000 շահառու: Նույնպես ընթանում է դրսի լուսավորության 1 նախագծի իրականացում Ախալցխեում (14 415 գծային մետր), ընդհանուր

արժողությունը՝ 295 337 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 261 523 լարի, որից կօգտվի մոտավորապես 54 600 շահառու:

- ❖ Ֆինանսավորվեց առափնյա ամրակայման 5 նախագիծ Ասպինձայի և Ախալցխեի մունիցիպալիտետներում (385 գծային մետր), ընդհանուր արժողությունը 513 188 լարի, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 487 527 լարի, որից կօգտվի 2 781 շահառու:
- ❖ Ավարտվեց 3 նախագիծ Ասպինձայի մունիցիպալիտետում (սարքավորվեց 168 գծային մետր առափնյա ամրակայում), 208 668 լարի ընդհանուր արժողությամբ, այստեղից տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 198 233 լարի, որից կօգտվի 1 031 շահառու:
- ❖ Ընթանում է առափնյա ամրակայման 2 նախագիծ Ասպինձայի և Ախալցխեի մունիցիպալիտետներում (217 գծային մետր), 304 520 լարի ընդհանուր արժողության, այստեղից՝ տարածաշրջանային զարգացման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը կազմեց 289 294 լարի, որից կօգտվի 1 750 շահառու:

Հավելյալ միջոցառումներ.

Սամցխե-Չավախեթի երկրամասային վարչությունը համակարգում է ենթակառուցվածքային նախագծերի իրականացման հարցերը էթնիկ փոքրամասնություններով բնակվող միավորումներում: Ընթացիկ տարին նույնպես էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորումներում պետական, տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեցին ճանապարհային ենթակառուցվածքի, խմելու ջրի համակարգերի, դրսի լուսավորության, մշակութային օբյեկտների վերականգնման աշխատանքներ: Դրա հետ միասին իրականացվեց 17 ամբուլատորիայի վերականգնում/շինարարություն, 41 դպրոցի վերականգնում, կառուցվեց համապատասխան չափորոշիչներով անհետաձգելի շտապ բժշկական օգնության կենտրոն Նինոծմինդայի մունիցիպալիտետում: Նշված նախագծերից նշանակալից է Ախալցխեի մունիցիպալիտետում էթնիկ փոքրամասնություններով բնակվող Ծուղրութ և Մխվիլիսի գյուղերում մանկապարտեզների շինարարությունը, որը սկսվեց այս տարի և կավատվի 2021 թվականին:

Ընդհանուր առմամբ ընթացիկ տարի տեղական և կենտրոնական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեց 340 նախագիծ 29 061 462 լարի արժողությամբ: Այդ թվում.

- ❖ Ասպինձայի մունիցիպալիտետ՝ 1 նախագիծ - 332 000 լարի արժողությամբ,
- ❖ Ախալցխեի մունիցիպալիտետ՝ 103 նախագիծ - 9 161 070 լարի արժողությամբ,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետ՝ 149 նախագիծ - 12 507 243 լարի արժողությամբ,
- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետ՝ 87 նախագիծ - 7 307 649 լարի արժողությամբ,
- ❖ Բորջոմի մունիցիպալիտետ՝ 4 նախագիծ - 1 242 315 լարի արժողությամբ

Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից «Արտոնյալ ագրովարկ» նախագծի շրջանակներում իրականացված նախագծեր/ծրագրերին տրվեց.

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 1,718 վարկ, պետական համաֆինանսավորումը կազմեց 19,102,495 լարի,
- ❖ Սամցխե-Չավախերթի տարածաշրջան՝ 840 վարկ, պետական համաֆինանսավորումը կազմեց 2,832,772 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 503 վարկ, պետական համաֆինանսավորումը կազմեց 5,924,246 լարի:

Գյուղի երիտասարդ ձեռներեցներին աջակցության «**Երիտասարդ ձեռներեց**» ծրագրի շրջանակներում ձևակերպվեց (հաստատված/ֆինանսավորված նախագծեր).

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 19 պայմանագիր, համաֆինանսավորումը կազմեց 740,506 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 6 պայմանագիր, համաֆինանսավորումը կազմեց 333,967 լարի:

«**Դի'ր ապագայի հիմքը**» պետական ծրագրի շրջանակներում հաստատված է.

- ❖ Կախերթի տարածաշրջանում, այգիների բաղադրիչի շրջանակներում՝ 40 հայտ (ծավալը՝ 241.14 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 1,458,843 լարի, տնկիների բաղադրիչի շրջանակներում՝ 1 հայտ, պետական համաֆինանսավորումը կազմեց 197,050 լարի, կաթիլային ոռոգման համակարգի սարքավորման ֆինանսավորման բաղադրիչի շրջանակներում՝ 2 հայտ (ծավալը՝ 2.10 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 4,814 լարի, ջրհորի/հորատանցքի/պոմպակայանի սարքավորման համաֆինանսավորման բաղադրիչի շրջանակներում՝ 6 հայտ (ծավալը՝ 11.71 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 82,396 լարի, բազմամյա մշակաբույս(եր)ի այգում, ցանքատարածությունում, խաղողի այգում վնասված տնկիների փոփոխման բաղադրիչի շրջանակներում՝ 2 հայտ (ծավալը՝ 54.80 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 277,736 լարի,
- ❖ Սամցխե-Չավախերթի տարածաշրջանում, այգիների բաղադրիչի շրջանակներում՝ 1 հայտ (ծավալը՝ 0.50 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 5,000 լարի, կորիզավոր մշակաբույսերի 100%-անոց ֆինանսավորման ենթանախագծի շրջանակներում՝ 15 հայտ (ծավալը՝ 5.09 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 127,986 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, այգիների բաղադրիչի շրջանակներում՝ 62 հայտ (ծավալը՝ 686.52 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 4,009,521 լարի, կարկտահարությանը դիմակայող համակարգի սարքավորման բաղադրիչի շրջանակներում՝ 7 հայտ, (ծավալը՝ 35.50 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 191,425 լարի, ջրհորի/հորատանցքի/պոմպակայանի սարքավորման

համաֆինանսավորման բաղադրիչի շրջանակներում՝ 1 հայտ (ծավալը՝ 12.00 հա), պետական համաֆինանսավորումը կազմեց 15,000 լարի:

«Վերամշակող և պահեստային արտադրամասերի համաֆինանսավորման նախագծի» շրջանակներում հաստատվել են.

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 2 հայտ, պետական համաֆինանսավորումը կազմեց 912,593 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 2 հայտ, պետական համաֆինանսավորումը կազմեց 1,200,000 լարի:

Ագրոարտադրությանը օժանդակող պետական ծրագրի շրջանակներում հաստատվեց.

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 114 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 2,937,123 լարի,
- ❖ Սամցխե-Չավախերթի տարածաշրջան՝ 5 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 78,675 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 23 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 785,327 լարի:

Ագրոպահովագրության ծրագրի շրջանակներում տրված է.

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 6,098 ապահովագիր, ապահովագրված է 6,640 հա հողատարածք, պետությունը ֆինանսավորեց 2,469,031 լարի,
- ❖ Սամցխե-Չավախերթի տարածաշրջան՝ 722 ապահովագիր, ապահովագրված է 731 հա հողատարածք, պետությունը ֆինանսավորեց 416,870 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 689 ապահովագիր, ապահովագրված է 3,272 հա հողատարածք, պետությունը ֆինանսավորեց 450,014 լարի:

«Գյուղատնտեսության արդիականացման, շուկային հասանելիության և ճկունության (AMMAR) համաֆինանսավորման ծրագրի շրջանակներում հաստատվեց.

- ❖ Կախերթի տարածաշրջան՝ 15 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 220,371 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 1 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 2,733 լարի:

Համայնատիրություններին (կոոպերատիվներին) աջակցության նպատակով հաստատվեց.

- ❖ Կախերթի տարածաշրջան – խաղողագործության ուղղությամբ 11 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 5,490,602 լարի, մեղվաբուծության ուղղությամբ՝ 1 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 12,600 լարի, կաթնագործության ուղղությամբ՝ 1 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 150,000 լարի,
- ❖ Սամցխե-Չավախերթի տարածաշրջան – կաթնագործության ուղղությամբ 1 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 150,000 լարի,

- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան - կաթնագործության ուղղությամբ 1 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 142,500 լարի:

Կաթնագործության ճյուղի արդիականացման և շուկային հասանելիության պետական ծրագրի (DIMMA) շրջանակներում հաստատվեց.

- ❖ Կախեթի տարածաշրջան՝ 15 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 1,928,032 լարի,
- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 55 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 1,424,194 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 4 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 689,450 լարի:

Գյուղի զարգացման ծրագրի (UNDP) շրջանակներում հաստատվեց.

- ❖ Կախեթի տարածաշրջան՝ 2 հայտ, պետական համաֆինանսավորում՝ 333,528 լարի,
- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 2 հայտ, պետական համաֆինանսավորումը կազմեց 276,080 լարի,
- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 2 հայտ, պետական համաֆինանսավորումը՝ 200,000 լարի:

Խնդիր. 2.1.2 Օժանդակություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալական վիճակի բարելավմանը

2.1.2.1 Սոցիալական ծրագրով օգնություն

Կախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում սոցիալական ծրագրերով օգնությունը բաշխվեց տարբեր ուղղություններով.

Պանկիսի կիրճ. բժշկական սպասարկման ֆինանսավորում՝ 103 շահառուի (գումարը՝ 37 818 լարի) վճարվեցին դիալեզի տեղափոխության ծախսերը, կատարվեց հոսանքի և գազի համաֆինանսավորում: Սոցիալական օգնություն ցուցաբերվեց նաև Դեղոփլիսձղարոյի, Ղվարելի և Սագարեջոյի մունիցիպալիտետներում բնակվող ընտանիքներին: Սոցիալական ծրագրերից ակտիվորեն օգտվում էր Թելավի և Լագոդեխի մունիցիպալիտետում բնակվող բնակչությունը:

Հավելյալ միջոցառում.

Բոլնիսի քաղաքապետարանի կողմից Կովիդ-19 համավարակի ժամանակ պարենային փաթեթով օգնություն ցուցաբերվեց 14668 ընտանիքի, այստեղից՝ 70%, այսինքն՝ 10 796 էթնիկ փոքրամասնության ներկայացուցչի, ապահովվեց 83 ընտանիքի նորածին երեխաների սնունդը, դեղորայքով օգնություն ցուցաբերվեց 230 շահառուի, ֆինանսավորվեց 22 պացիենտի բուժումը, ֆինանսավորվեց 25 պացիենտի ախտորոշումը:

2.1.2.2 Օգնություն սոցիալապես անպաշտպան էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտանիքներին

Համավարակ COVID-19-ի պատճառով երկրում ստեղծված իրավիճակից ելնելով, ք. Բաթումի մունիցիպալիտետի կողմից իրականացվեց մունիցիպալիտետի տարածքում գրանցված 682 էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ շահառուի պարենային նպարեղենի փոխանցում:

2.1.2.3 Տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպում, քաղաքի բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերին և սպասարկումներին ծանոթության նպատակով

Ք.Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվությանը համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

2.1.2.4 Սոցիալական ծրագրերին ծանոթանալու նպատակով, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների մունիցիպալիտետներում տեղեկատվական հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ

Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին սոցիալական ծրագրերին ծանոթացնելու նպատակով, Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարության կազմակերպմամբ և Կախեթի տարածաշրջանի՝ Լագոդեխի և Ղվարելի մունիցիպալիտետների քաղաքապետերի համակարգմամբ, անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ. Կաբալա (Լագոդեխի մունիցիպալիտետ) և Ախալստփելի (Ղվարելի մունիցիպալիտետ) գյուղերում:

2.1.2.5 Դմանիսի, Ծալկայի և Թեթրիձարոյի մունիցիպալիտետում սոցիալական ապահովման 2020 թվականի ծրագրի իրականացում (նյութական և ոչնյութական սոցիալական օգնություններ, պարգևներ և կրթաթոշակներ Թեթրիձարոյի մունիցիպալիտետում մասնագիտական զարգացման կրթության օժանդակության և տեղական համայնքային խմբերի/կազմակերպությունների սոցիալական նախաձեռնությունների աջակցության 2020 թվականի ծրագրի իրականացում

2020 թվականին Դմանիսի մունիցիպալիտետում նյութական և սոցիալական օգնություններ՝ դիտք <http://dmanisi.gov.ge/sasargeblo-informacia1/socialuri-programebi>

Ծալկայի և Թեթրիձարոյի մունիցիպալիտետների կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել:

Ռազմավարական նպատակ 3

Որակյալ կրթության հասանելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում

Քաղաքացիական ինտեգրման գործընթացում կարևոր մարտահրավեր է ներկայացնում պետական լեզվի իմացության ցածր մակարդակը: Համապատասխանաբար, տարվա ընթացքում առաջնահերթություն էր ներկայացնում կրթության յուրաքանչյուր աստիճանի այն ծրագրերի և նախագծերի արդյունավետ իրականացումը, որոնք նպատակաուղղված են պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

Այս ուղղությամբ ընթացիկ քաղաքականությունը, ինչպես մեթոդոլոգիապես, այնպես էլ ակտորների ընդգրկման տեսանկյունից կոմպլեքսային բնույթ ունի: Տարվա ընթացքում նշանակալիորեն ընդարձակվեց շահառուների սեգմենտը: Վրաց լեզվի ուսումնական ծրագրերը և դասընթացները արդեն հասանելի են ցանկացած շահագրգռված անձի համար, այդ թվում. դպրոցի աշակերտների, ուսանողների, հանրային աստիճանավորների, զինվորական ծառայողների, հոգևորականների, դատապարտյալների և այլոց համար:

Կրթության յուրաքանչյուր աստիճանը հասանելի է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ապահովված է նաև էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով կրթություն ստանալու հնարավորությունը (ադրբեջաներեն, հայերեն, ռուսերեն):

Այսօրվա դրությամբ, Վրաստանում գործում է շուրջ 100 ոչվրացալեզու մանկապարտեզ և շուրջ 300 ոչվրացալեզու հանրային դպրոց և սեկտոր: Հաջողությամբ ընթանում է պարզեցված ծրագիր բարձրագույն, ինչպես նաև մասնագիտական կրթություն ստանալու համար:

Գլոբալային համավարակի մարտահրավերներին ի պատասխան, միջնակարգ կրթության աստիճանին ուսումնական գործընթացն ընթացավ հեռավար ռեժիմով: Հանրային հաղորդիչի եթերում արմատավորվեց և գործարկվեց «Հեռուստադպրոց» նախագիծը, որը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախ և առաջ նախատեսում էր վրաց լեզվի հեռուստադասերի անցկացում, իսկ հաջորդ փուլում ադրբեջաներեն և հայերեն լեզուներով ավելացան նաև տարբեր առարկաների դասերը: Դրա հետ միասին կարևոր է, որ ոչվրացալեզու դիմորդների համար արդեն առաջարկվել են հեռուստահաղորդումներ ընդհանուր ունակություններից:

Միջանկյալ նպատակ. 3.1 Նախադպրոցական կրթության հասանելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր. 3.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրի մշակում, ուսումնական ռեսուրսների մոդելների ստեղծում, դաստիարակ-ուսուցիչների և վարչական անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագրերի պատրաստում

3.1.1.1 Ծալկայի և Գարդաբանի մունիցիպալիտետներում նոր մուր-մանկապարտեզների շինարարություն

Հաշվետու ժամանակաշրջանում Ծալկայի մունիցիպալիտետի չորս գյուղում բացվեց մանկապարտեզ: Դրանք են.

1. գյուղ Ավրանլո -1 խումբ, 26 երեխա, 1 դաստիարակ և 1 դայակ,
2. գյուղ Արծիվանի -2 խումբ, 47 երեխա, 2 դաստիարակ և 2 դայակ,
3. գյուղ Ղզլքիլիսա -1 խումբ, 25 երեխա, 1 դաստիարակ և 1 դայակ,
4. գյուղ Կոխտա -1 խումբ, 22 երեխա, 1 դաստիարակ և 1 դայակ:

Հավելյալ միջոցառումներ.

Հաշվետու ժամանակաշրջանում Մառնեուլի մունիցիպալիտետում իրականացվեցին հետևյալ մանկապարտեզների վերականգնողական աշխատանքները.

- ❖ ք. Մառնեուլիի N4 մանկական մուր-պարտեզ,
- ❖ գյուղ Շահումյան (հին) մանկական մուր-պարտեզ,
- ❖ գյուղ Կապանախչիի մանկական մուր-պարտեզ:

3.1.1.2 Մասնագիտական կրթության դասընթացների իրականացում

Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել նոր կորոնավիրուսի տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

Հավելյալ միջոցառումներ.

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված ակտիվություններ.

Էթնիկ փոքրամասնություններին պետական լեզվի ուսուցման ուժեղացման նպատակով, «Ընդհանուր կրթության բարեփոխման» ծրագրի շրջանակներում հաստատվեց ենթածրագիր «Բիլինգային (երկլեզու) կրթության օժանդակություն էթնիկ փոքրամասնությունների նախադպրոցական և դպրոցական հաստատություններում», որը նախատեսում է.

- ❖ պետական լեզվի և մայրենի լեզվի գրագիտության մակարդակի բարձրացում խիտ բնակվող տարածաշրջանների նախադպրոցական և դպրոցական աստիճանի հաստատություններում, բիլինգային կրթության ներդրման-զարգացման ճանապարհով և համապատասխան ռեսուրսների ստեղծում,
- ❖ մեխանիզմների ստեղծում եղած կադրերի վերապատրաստման և նոր կադրերի ներգրավման համար:

Ծրագրի շրջանակներում 2020 թվականին.

- ընտրվեց 4 պիլոտային (փորձնական) դպրոց և 4 նախադպրոցական կրթության հաստատություն Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում,
- ստեղծվեց ռեսուրսների խումբ, որը աշխատում է երկու աստիճանների պիլոտային ռեսուրսների ստեղծման վրա. դպրոցական վրացալեզու բիլինգային ծրագիր և նախադպրոցական աստիճանի մայրենի լեզվով և վրացերեն լեզվով պիլոտային ծրագիր,
- ուսուցիչների մասնագիտական զարգացման տան հետ համագործակցությամբ, պիլոտային դպրոցները և նախադպրոցական հաստատությունները կոմպլեկտավորվեցին համապատասխան երկլեզու կադրերով,
- UNICEF-ի աջակցությամբ, ընթանում է մայրենի լեզվով ռեսուրսների ադրբեջաներեն և հայերեն լեզուներով թարգմանություն,
- իրականացվեցին պիլոտային դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում տեղեկատվական-ծանոթության բնույթի այցեր,
- իրականացվեցին վարժանքներ և աշխատանքային խմբերի հանդիպումներ դպրոցական բիլինգային կրթության ծրագրերի պատրաստման և տարրական աստիճանում փորձարկման, էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցմանը օժանդակության մեխանիզմների ստեղծման և դպրոցի ղեկավարության որակավորման բարձրացման համար, քաուչինգի մեխանիզմ ստեղծելու նպատակով բիլինգային կրթական գործընթացին և բազմալեզու միջավայրը արդյունավետ վարելուն, զարգանալուն կողմնորոշված, համագործակցային ուսումնական միջավայր ստեղծելու և լիդերության մշակույթը արմատավորելու համար:

Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների համար պետական լեզվի ուսուցման դասընթացի անցկացում.

ՀԻԻԱ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի ոչվրացալեզու դպրոցներին աջակցության ծրագրի շրջանակներում, Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների համար առաջարկվել է պետական լեզվի ուսուցման դասընթաց: Ընթացիկ տարում դասընթացն ավարտեց 449 ունկնդիր, այդ թվում. (ա1 մակարդակ-109, ա2 մակարդակ-207, ա2+ մակարդակ – 46, բ1 մակարդակ - 133):

Օժանդակություն Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցներում վրաց լեզվի, որպես երկրորդ լեզվի, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը.

ՀԻԻԱ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի ոչվրացալեզու դպրոցների աջակցության ծրագրի շրջանակներում մշակվեց վրացերենի, որպես երկրորդ

լեզվի քերականության ուսուցման սիստեմային դասընթացի վարժանք-մոդուլ: Նշված վարժանք մոդուլը արդիականացվեց համավարակի պատճառով և ընթանում էր առցանց ռեժիմով: Մոդուլը անցկացվեց ոչվրացալեզու դպրոցների տեղական վրացերենի, որպես երկրորդ լեզվի, 225 ուսուցչի համար:

Միջանկյալ նպատակ. 3.2 Որակյալ ընդհանուր կրթության հասանելիության աճ ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով

Խնդիր. 3.2.1 Ազգային ուսումնական պլանի և կրթական ռեսուրսների բարելավում - զարգացում որակյալ երկլեզվյա կրթության ներդրմանը օժանդակության համար

3.2.1.1 Էթնիկ վրացի և ոչվրացալեզու երեխաների ինտեգրված ուսուցում

Ակտիվությունը մասնակիորեն իրականացվեց Դմանիսի մունիցիպալիտետի կողմից, քանզի ուսուցումն ընթանում էր հեռավար որոշ սահմանափակ ժամանակաշրջանի ընթացքում:

3.2.1.2 Դմանիսի N1 մանկապարտեզում պետական լեզվի ուսուցմանը նպաստող նախագծի իրականացում հատուկ ծրագրով, որը նախատեսում է ամենօրյա լրացուցիչ ուսուցում

Երկրում ստեղծված համավարակային իրավիճակից ելնելով, Դմանիսի մունիցիպալիտետի N1 մանկապարտեզում չհաջողվեց ամենօրյա լրացուցիչ ուսուցման իրականացումը:

3.2.1.3 Ազգային ուսումնական օլիմպիադաների անցկացում հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով

Ոչվրացալեզու հանրակրթական հաստատությունների այն աշակերտների թվաքանակը, որոնք մասնակցում են «Վրացերենը՝ ոչվրացալեզու հանրակրթական հաստատության աշակերտների համար» առարկայից ազգային ուսումնական օլիմպիադային

- 2019-2020 ուսումնական տարվա «Վրացերենը՝ ոչվրացալեզու հանրակրթական հաստատության աշակերտների համար» առարկայից ազգային ուսումնական օլիմպիադայի երկրորդ փուլին մասնակցեց 261 աշակերտ:
- Երկրում ստեղծված իրավիճակից ելնելով, նոր կորոնավիրուսից (SARS-CoV-2) առաջացած վարակի տարածման կանխարգելման նպատակով (COVID 19) երրորդ փուլը չի անցկացվել,
- 2020-2021 ուսումնական տարվա ազգային ուսումնական օլիմպիադայի առաջին փուլն անցկացվեց առցանց, 2020 թվականի նոյեմբերի 16-ից և «Վրացերենը՝ ոչվրացալեզու

հանրակրթական հաստատության աշակերտների համար» առարկային մասնակցեց 784 աշակերտ, այստեղից երկրորդ փուլ անցավ 395 աշակերտ:

Հավելյալ միջոցառումներ.

- 2020-2021 ուսումնական տարվա համար առողջապահության կարգավորումներին ի պատասխան, ոչվրացալեզու դպրոցների համար հայերեն և ադրբեջաներեն լեզուներով տպագրվեցին և դպրոցներին փոխանցվեցին տեղեկատվական պաստառներ կովիդ-19-ի կանխարգելման նպատակով:
- Ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների համար թարգմանվեցին I-VII դասարանների երաշխավորված դասագրքերը:

2020 թվականին Մառնեուլի մունիցիպալիտետում սկսվեց 7 նոր հանրային դպրոցի շենքերի շինարարություն. Խուլդարա, Շուլավեր, Ջանդարի, Ծոփ, Կասումլո, Չանախչի և Քութլիար գյուղերում:

- Նաև մրցույթ հայտարարվեց Սաբիրքենդ գյուղի դպրոցի շենքի շինարարության համար, որը պետք է կառուցվի 2 տարվա ընթացքում:

Խնդիր. 3.2.2 Օժանդակություն ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացմանը

3.2.2.1 Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների առարկայական և մասնագիտական իրավասությունների հավաստագրման քննության/թեստերի անցկացման ապահովում ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով

2020 թվականին ՀԻԻԱ Գնահատման և քննությունների ազգային կենտրոնն անցկացրեց միայն առարկայի քննություն որպես ուսուցիչ աշխատելու ցանկություն ունեցողների համար: Մասնավորապես.

- ադրբեջաներեն՝ 11 ապրիլանոտ,
- ռուսերեն՝ 26 ապրիլանոտ,
- հայերեն՝ 34 ապրիլանոտ,

Ընդամենը՝ 71 ապրիլանոտ:

Միջանկյալ նպատակ. 3.3 Բարձրագույն կրթության մատչելիության բարձրացում

Խնդիր. 3.3.1 Արտոնյալ քաղաքականության ապահովում և աջակցություն

3.3.1.1 1+4 նախագիծ. ստաժավորման ծրագրի, բարձրագույն և մասնագիտական կրթության մատչելիության տեսանկյունից առկա հնարավորությունների մասին տեղեկատվության մատչելիություն հասակակից-լուսավորիչների վերապատրաստում (TOT վարժանքի անցկացում)

«Էթնիկ փոքրամասնությունների շրջանում բարձրագույն և մասնագիտական կրթության մատչելիության օժանդակում» նախագծի շրջանակներում հատուկ պատրաստություն անցավ շուրջ 50 երիտասարդ: Մեկ շաբաթվա ընթացքում մասնակիցները հանդիպումներ էին ունենում պետական կառույցների ներկայացուցիչների և հրավիրյալ փորձագետների հետ, խորացնում էին գիտելիքը կրթական ծրագրերի, նորույթների մասին և միաժամանակ նրանց տրվում էր հնարավորություն մշակել հաղորդակցության ունակություն-սովորությունները: Նախագծի հաջորդ փուլում երիտասարդ հասակակից լուսավորիչները էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում անց էին կացնում տեղեկատվական հանդիպումներ աշակերտների, ուսուցիչների, համայնքի առաջնորդների հետ: 2020 թվականին վերոնշյալ նախագծերի շրջանակներում մարզիչների վարժանքներն ընթացան առցանց ռեժիմով:

3.3.1.2 «1+4 նախագծի» ստաժավորման ծրագրի, բարձրագույն և մասնագիտական կրթության հասանելիության տեսանկյունից առկա հնարավորությունների մասին տեղեկատվության մատչելիություն» նախագծի իրականացում

Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, Վրաստանի ՄԱԿ-ի ստոցիացիայի և «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի» (CCIIR) աջակցությամբ, շարունակվեց «Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիությանը աջակցություն» նախագծի իրականացումը: Նախագծի շրջանակներում հասակակից լուսավորիչների կողմից էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում անցկացվեցին հանդիպումներ: Բնակչությանը հաղորդվեց տեղեկատվություն կրթության ոլորտում գոյություն ունեցող նորույթների մասին: 2020 թվականին անցկացվեց 41 հանդիպում 8 մունիցիպալիտետի 47 գյուղում 517 շահառուի ընդգրկմամբ:

3.3.1.3 «1+4 ծրագրի» իրականացում

Վրաստանի պաշտպանության նախարարության ՀԻԻԱ Դավիթ Ադմաշենեբելիի անվան պաշտպանության ազգային ակադեմիան միացած է «1+4 ծրագրի» իրականացման գործընթացին: Մասնավորապես, նշված ծրագրի շրջանակներում, 2019-2020 ուսումնական տարում ընդունված ուսանողների թվաքանակը կազմում էր 11:

3.3.1.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար վրաց լեզվից պատրաստության (1+4) ծրագրի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում Սամցխե-Չավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում

ՀԻԲԱ Դավիթ Ադմաշենբեկի անվան պաշտպանության ազգային ակադեմիայի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

3.3.1.5 Միասնական ազգային քննություններին ընդհանուր ունակությունների թեստի հանձնման ապահովում ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով, վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով ընդունվելու համար անհրաժեշտ է միասնական ազգային քննություններից միայն ադրբեջաներեն կամ հայերեն լեզվով ընդհանուր ունակությունների քննության, կամ օսական և արխագական լեզվի քննության ապահովում

Վիճակագրական տեղեկատվություն 2020 թվականի միասնական ազգային քննություններին գրանցված դիմորդների մասին.

- Ընդհանուր ունակություններ ադրբեջաներեն՝ 1946,
- Ընդհանուր ունակություններ հայերեն՝ 432,
- Ընդհանուր ունակություններ ռուսերեն՝ 25,
- Օտերեն թեստ՝ 5

Ընդամենը՝ 2408 դիմորդ:

Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց.

- Ընդհանուր ունակությունները ադրբեջաներեն հանձնած՝ 935,
- Ընդհանուր ունակությունները հայերեն հանձնած՝ 252,
- Օտերեն թեստ՝ 4,

Ընդհանուր ունակությունները ռուսերեն՝ ուսումը շարունակելու իրավունք ձեռքբերեց 8 ապիլկանս

2020 թվականի միասնական ազգային քննություններից միայն ընդհանուր ունակությունները ադրբեջաներեն, հայերեն և օտերեն լեզուներով թեստի արդյունքների հիման վրա պետական ուսումնական դրամաշնորհ ձեռքբերեց 196 դիմորդ.

- ❖ Ընդհանուր ունակությունների ադրբեջաներեն լեզվով թեստի հիման վրա՝ 99 դիմորդ,
- ❖ Ընդհանուր ունակությունների հայերեն լեզվով թեստի հիման վրա՝ 93 դիմորդ,

❖ Մայրենի լեզվի՝ օսերեն թեստի հիման վրա՝ 4 դիմորդ:

3.3.1.6 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավման նպատակով, նրանց քննությունների մասին տեղեկատվության հաղորդում (Բաց դռների օրերի կազմակերպում)

ՀԻԻԱ Գնահատման և քննությունների ազգային կենտրոնը 2020 թվականի փետրվարին Քվեմո Քարթլիի տարածաշրջանի 6 մունիցիպալիտետում անցկացրեց բաց դռների օրեր: Շահառուների թվաքանակը կազմում էր 500 դիմորդ:

- Հրապարակվեց գրանցման տեսահրահանգ ՀԻԻԱ Գնահատման և քննությունների ազգային կենտրոնի պաշտոնական կայք-էջի վրա հայերեն և ադրբեջաներեն սուբտիտրերով:
- Նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով, բաց դռների օրերը անցկացվեցին առցանց Microsoft Teams ծրագրի օգնությամբ: Դիմորդների իրազեկման նպատակով բաց դռների օրերը փուլ առ փուլ անց էին կացվում տարբեր տարածաշրջանների ավարտական դասարանի աշակերտների համար: Աշակերտները առցանց բաց դռների օրերին մասնակցության համար բաժանվում էին տարածաշրջանների համաձայն:

Հավելյալ միջոցառում.

Կայք-դպրոցի նախագծի շրջանակներում ընթանում էին վեբինարներ դիմորդների համար: Ընդհանուր առմամբ, մոտավորապես 400 վեբինար էր տեղադրվել EL.GE. հարթակի վրա: Վեբինարները անցկացվեցին առաջատար ուսուցիչների կողմից հիմնական առարկաներից: Դրա հետ միասին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով դպրոցների աշակերտների համար վեբինարներ անցկացվեցին այն առարկայից, որը նրանք միասնական ազգային քննությունների ժամանակ են հանձնում: Բոլոր անցկացված վեբինարները, հեռուստահաղորդումը, թե՛ ստեղծված ռեսուրսը տեղադրված են կայք-էջերի վրա և հասանելի են ցանկացած հետաքրքրվող անձի համար:

Միջանկյալ նպատակ. 3.4 Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում **Խնդիր. 3.4.1 Մասնագիտական ուսումնարաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության բարելավում, ինչպես նաև չափահաս բնակչության համար պետական լեզվի ուսումնառության հասանելիության ապահովում**

3.4.1.1 Էթնիկ փոքրամասնությունների չափահաս ներկայացուցիչների համար լեզվական պատնեշի հաղթահարման նպատակով, վրաց լեզվի ուսուցման դասընթացների ստեղծում

Ք. Թբիլիսիի քաղաքապետարանի սակրեբուլոյին կից գործող «Թբիլիսիի բարեկամության տանը» առցանց ընթացան վրաց լեզվի ուսուցման դասընթացներ: Ընդհանուր առմամբ դասընթացն անցավ 135 ունկնդիր:

3.4.1.2 Ոչվրացալեզու դատապարտյալների համար պետական լեզվի ուսումնական դասընթացի ապահովում

Վրաստանի Արդարադատության նախարարության կողմից պլանավորված միջոցառումը չի իրականացել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

3.4.1.3 Էթնիկ փոքրամասնությունների մասնագիտական կրթության մատչելիության բարելավման նպատակով հատուկ կրթական ծրագրերի իրականացում

Մասնագիտական կրթական ծրագրերը մասնագիտական կրթական հաստատություններում/քոլեջներում իրականացվում են վրաց լեզվով: Այն անձինք, ում մոտ չի հաստատվում վրաց լեզվի տիրապետման ունակություն, մասնագիտական թեստը կարող են անցնել ռուսերեն, հայերեն կամ ադրբեջաներեն լեզվով: Այս ճանապարհով ընդունված անձանց համար մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունն սկսվում է վրաց լեզվի մոդուլներն անցնելով (A2 և B1): Երրորդ մակարդակի ծրագրերի համար սահմանված է վրաց լեզվի A1 մակարդակի մոդուլ անցնել, իսկ չորրորդ և հինգերորդ մակարդակի ծրագրերի համար՝ անցնել ինչպես A2, այնպես էլ B1 մակարդակի վրաց լեզվի մոդուլները:

3.4.1.3 (1) Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մասնագիտական կրթության մատչելիության բարելավում (Էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետներում)/ՀԻԻԱ կրթական և գիտական ենթակառուցվածքի զարգացման գործակալություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական կրթության մատչելիության բարելավման նպատակով, ք. Մառնեուլիում ավարտվեցին մասնագիտական քոլեջի՝ «Մոդուսի» նոր, 150 ուսանողի վրա հաշվարկված ուսումնական շենքի շինարարության և դրսի սպորտային հրապարակի սարքավորման աշխատանքները: Ք.Ախալքալաքում ընթանում է ՀԻԻԱ Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի մասնագիտական բաժանմունքի շինության լրիվ վերականգնում, որը կավարտվի 2021 թվականի ամռանը: Ք.Ախալցխիսում ընթանում է «Օպիզարի» մասնագիտական քոլեջի արհեստանոցների շինարարությունը:

3.4.1.3 (2). Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները մասնագիտական կրթական ծրագրով ընդունվում են հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով անցած մասնագիտական թեստավորման հիման վրա

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեն հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով անցնել մասնագիտական թեստավորումը և ընդունվեն մասնագիտական կրթական ծրագրով: Հատկանշական է, որ 2020 թվականին վերացվեց կենտրաձիգ թեստավորումն այն ծրագրերով, որոնց չի ամրագրվում (ֆիքսվում) մրցույթ: Այդպիսի ծրագրերով ապլիկանտներն անցնում են միայն կրթական հաստատության ներքին ընտրական ընթացակարգերը: Իսկ դուալային ծրագրերով սովորելու իրավունք ձեռքբերելու նպատակով ապլիկանտներն անցնում են գործատուի կողմից կազմակերպված մրցույթը: Դրա հետ միասին, 2020 թվականին երկրում ստեղծված համավարակային իրավիճակից ելնելով, մասնագիտական կրթական ծրագրերով գրանցում հայտարարվեց միայն մեկ անգամ: Արդյունքում, հայերեն, ռուսերեն կամ ադրբեջաներեն լեզվով անցկացված մասնագիտական թեստավորում/մրցույթ/ընտրություն անցնելու ճանապարհով, 2020 թվականին սովորելու իրավունք ձեռքբերեց 227 ապլիկանտ: Մասնագիտական կրթական ծրագրերի հասանելիության և դրանց գրանցվելու մասին տեղեկատվությունը տարածելու նպատակով, մասնագիտական կրթության զարգացման դեպարտամենտի ներկայացուցիչները և առանձին քոլեջներ տարվա ընթացքում իրականացնում էին տեղեկատվական առցանց հանդիպումներ և վեբինարներ:

2020 թվականի մասնագիտական ծրագրերի այն դիմորդների վիճակագրությունը, ով թեստավորում անցավ մայրենի լեզվով:

Քննության լեզու	Գրանցվեց (1 առաջնահերթություն)	Ձեռք բերեց սովորելու իրավունք	2020 թվականին ընդունվեց մասնագիտական ծրագրով
Ադրբեջաներեն	159	105	105
Ռուսերեն	196	88	84
Հայերեն	77	34	34
Ընդամենը	432	227	223

3.4.1.3 (3) Էթնիկ փոքրամասնությունների թվաքանակը, ովքեր մասնագիտական կրթական ծրագրով սովորելու ժամանակ անցել են վրաց լեզվի մոդուլը:

2020 թվականին այն ուսանողների զումարային թվաքանակը, ովքեր ընդունվել են մասնագիտական ծրագրով և հաշվարկվել են վրաց լեզվի A2 և B1 մոդուլներին, կազմում է 1262:

3.4.1.4 Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների վերապատրաստում

- Պետական լեզվի ուսուցման և ինտեգրման ծրագրի զարգացման նպատակով, ինչը վրաց լեզվի ուսուցումից բացի նախատեսում է շահառուների ինտեգրումը հասարակությանը և համակարգչային ունակություն-սովորությունների ձևավորման նպատակով ակտիվությունների իրականացումը, ձևավորվեց դասագրքերի և համապատասխան ծրագրերի ստեղծման աշխատանքային խումբ: Պատրաստվեց «Այբբենական դասընթաց» համապատասխան ծրագրով և սիլաբուսով, դասընթացը փորձարկումը հաջողությամբ անցավ,
- պետական լեզվի ուսուցման և ինտեգրման ծրագրով դպրոցի 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում, որոնք գտնվում են Վրաստանի երեք տարածաշրջանում. Քվեմո-Քարթլի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի, ուսումնառությունն ավարտեց 2019 թվականին ընդունված (68 խումբ) 842 ներկայացուցիչ և 2020 թվականին ընդունված (38 խումբ) էթնիկ փոքրամասնության 504 ներկայացուցիչ,
- պետական լեզվի ծրագրի ավարտման կապակցությամբ 4 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում և 5 զինվորական հենակայանում անցկացվեց վերջնական քննություն (թեստ-հարցազրույց), որին ներկա էին ՀԻԻԱ Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի ներկայացուցիչներ և քննվողներ,
- ծրագիրն իրականացվեց դաշտային-զինավարժությունների հենակայանում Վրաստանի զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայությունում ծառայող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, որոնք անցել են սկզբնական մարտական պատրաստություն: Ալգեթի, Վարցիխեի, Վազիանիի, Օրխելի, Ախալցխիի և Կրծանիսի զինվորական հենակայանում լեզվի տիրապետման A1 մակարդակի ծրագրից օգտվեց էթնիկ փոքրամասնության 238 ներկայացուցիչ զինվորագրված անձ (ռեկրուտ): Կովիդ-19-ի տարածման կանխարգելման նպատակով իրականացված միջոցառումների պատճառով 17 խմբից ուսումնական գործընթացը դադարեցվեց 7 խմբի հետ,
- պետական լեզուն A1 մակարդակով տիրապետեց/սովորեց օտար երկրի 32 քաղաքացի, որոնց շնորհիվ էն Վրաստանի տարածքում օրինական ապրելու իրավունք,
- կազմավորվեց 151 ուսումնական խումբ, նրանցից ստեղծվեց 42 մոբիլ խումբ 2 քաղաքում, 14 գյուղում և 6 ռազմական հենակայանի վրա, 13 կենտրոնի և 96 հեռավար ուսուցման խումբ: Ընդամենը 2020 թվականին ընդունվեց էթնիկ փոքրամասնության 1950 ներկայացուցիչ,
- 2020թ. տարածաշրջանային 13 ուսումնական կենտրոնում, 159 ուսումնական խմբի շրջանակներում պետական լեզվի ուսուցման դասընթացներ անցավ 2059 ունկնդիր,
- երկրում նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման հնարավորության կանխարգելման նպատակով, պետական լեզվի ուսուցման ծրագրում իրականացվեց էլեկտրոնային ուսուցման բաղադրիչի կիրառում, համապատասխանաբար գործող խմբերի մի մասը, 79 խմբի 890 շահառու, անցավ էլեկտրոնային ուսուցման ձևաչափի, նրանցից ուսումն ավարտեց 64 խումբ,

- անցկացվեցին աշխատանքներ էլեկտրոնային ուսուցման անցնելու կապակցությամբ. ձևավորվեցին խմբեր Microsoft Teams-ի հարթակի վրա, պատրաստվեց/ընթանում է աշխատանք լրացուցիչ ռեսուրսների ստեղծման (քվիզներ՝ վիկտորինաներ, լսողական առաջադրանքներ, թեստեր) և վերջնական թեստավորումը էլեկտրոնային ռեժիմով անցնելու մասին,
- դպրոցի վարչությանը և ծրագրերի մարզիչներին անցկացվեց TOT էլեկտրոնային ուսուցումը արդյունավետ իրականացնելու նպատակով,
- էլեկտրոնային գրանցման համար պատրաստվեց հարթակ, առանձնացվեցին պատասխանատու անձինք, ում օգնությամբ շահառուները կարող են առանց տնից դուրս գալու գրանցվել և միանալ առցանց ուսուցմանը,
- այսօրվա դրությամբ հեռավար ձևաչափով ուսուցում են անցնում 104 խմբի (2019 թվականին ընդունված 2 և 2020 թվականի 102 խումբ) 1282 ներկայացուցիչ,
- բացի չափորոշիչ ծրագրերից, ինչպիսիք են A1, A2 և B1 մակարդակները, իրականացվում են ճյուղային ծրագրեր 14 տարբեր ուղղություններով: Զբոսաշրջության, բուժքրոջ գործի, քաղաքացիական կրթության և մենեջմենտի դասընթացներից օգտվեց 8 խմբի 90 շահառու,
- հունվարին Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում անցկացվեց հաջողակ շրջանավարտներին վկայականներ հանձնելու հանդիսություն:

3.4.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին վրաց լեզվի անվճար դասընթացների ապահովում Ա(ո)ԻԱ «Աջարիայի կրթության հիմնադրամի» աջակցությամբ համագործակցության Հուշագրի շրջանակներում (2020 թվականին պլանավորված է հուշագրի ձևակերպում «Բարեկամության տան» և նշված հիմնադրամի միջև)

Ք. Բաթումի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

**Ռազմավարական նպատակ 4
Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայր**

Էթնիկ փոքրամասնությունների ինքնության և ինքնագոյի պահպանությունը և օժանդակությունը կարևոր բաղադրիչ է քաղաքացիական հավասարության ապահովման գործընթացում: Տարվա ընթացքում այս ուղղությամբ շարունակվեց տարբեր ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնությունների մշակույթի զարգացմանը և ժողովրդականացմանը: Մշակութային ինքնադրսևորման օժանդակության և հետագա ինտեգրման նպատակով

շարունակվեց թանգարանների և թատրոնների գործունեության օժանդակությունը ֆինանսական աջակցության ապահովման ճանապարհով:

Միջանկյալ նպատակ. 4.1 Մշակութային քաղաքականության մշակման և իրականացման գործում էթնիկ փոքրամասնությունների դերի և նշանակության արտացոլում

Խնդիր. 4.1.1 **Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանմանը ուղղված գործունեության բարելավում, համակարգման ապահովում տարածաշրջանային և տեղական միավորների հետ**

4.1.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ժողովրդական և կրոնական տոների նշում

2020 թվականին Ո.Ն.Ի.Ա. Լագոդեխի մշակույթի, սպորտի և երիտասարդության գործերի զարգացման կենտրոնի կողմից անցկացվեց 8 միջոցառում: Մասնավորապես, ինտելեկտուալ խաղեր Արեշփերանի, Փոնա և Հերեթիսկարի գյուղերում: Ինչպես նաև իրականացվեց նախագիծ «Որախ ամառ Լագոդեխի մունիցիպալիտետում» Արեշփերանի, Փոնա, Կաբալի, Դավիթախանի և Հերեթիսկարի գյուղերում:

4.1.1.2 Վրացական ժողովրդական տոնակատարություններին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցություն

Կախեթի երկրամասում պետական լիազորի վարչության կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.1.1.3 ՈՌԻԱ «Դմանխի մշակույթի և արվեստի կենտրոնին առընթեր գործող խմբերում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում

2020 թվականին ՈՌԻԱ «Դմանխի մշակույթի և արվեստի կենտրոնին առընթեր գործող խմբակներ (նկարչության, փայտահատման խմբակ) ընդունվեց 10 էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ աշակերտ:

4.1.1.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հասարակական գործիչների հորեյանների նշում (գրական երեկոներ/մշակութային միջազգային, կրթական միջոցառումների կազմակերպում/էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ պատանի նկարիչների ցուցահանդեսների անցկացում

Մառնեուլիի մունիցիպալիտետի, Ալգեթի գյուղում տեղի ունեցավ բազմաէթնիկական փառատոն «Շին», որի նպատակն է օժանդակել մունիցիպալիտետում բնակվող էթնիկ

խմբերի միջև միջմշակութային երկխոսության/կապերի խորացմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը և այլն:

2020 թվականին, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության օժանդակությամբ, Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի և Մառնեուլիի մունիցիպալիտետի «Մշակույթի կենտրոնի» աջակցությամբ, որի նպատակն է նպաստել Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ինտեգրմանը հասարակությանը, երիտասարդության տեղեկացվածությանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, մունիցիպալիտետի 4 գյուղում (Շահումյան, Խոժոնի, Սադախլո, Ալգեթի), «Բազմերանգ Վրաստան» նախագծի շրջանակներում իրականացվեցին տարբեր միջոցառումներ, այդ թվում.

- մշակութային-կրթական-տեղական արվեստագետների մասնակցությամբ կազմակերպվեցին ցուցահանդեսներ, համերգներ,
- գիտնականների/գրողների հանդիպում տեղական բնակչության հետ, որը նաև ներառում էր մշակութային երկխոսության խորացման նշանակություն,
- սպորտային հանդերձանք փոխանցվեց դպրոցներին,
- ցուցադրվեցին կարճամետրաժ ֆիլմեր,
- անցկացվեցին դասախոսություն-սեմինարներ տարբեր թեմաներով,
- հայտնի ադրբեջանցի երաժիշտ Վազիֆ Մուստաֆա-Չադեի հոբելյանական տարեդարձի (80-ամյակ) կապակցությամբ ցուցադրվեց նրա ստեղծագործությունն արտացոլող վավերագրական ֆիլմ և մայրաքաղաքից ժամանած և տեղի երիտասարդ երաժիշտների մասնակցությամբ կատարվեցին Վազիֆ Մուստաֆա-Չադեի հայտնի կոմպոզիցիաները,
- տեղի երիտասարդների համար անցկացվեց Իվ. Չավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի ուսումնական ծրագրերին/ուղղություններին ծանոթացում՝ «Պրոֆորիենտիրի»,
- տեղական դպրոցների մի քանի գրադարանի փոխանցվեցին նախարարության օժանդակությամբ հրատարակված գրքեր և այլն:

Մառնեուլիի հանրային գրադարանում տեղի ունեցավ հանրային դասախոսություն «Մուլտիկուլտուրալիզմի և մշակութային բազմերանգության նկատմամբ վերաբերմունքը Վրաստանում»:

Ք. Մառնեուլիում անցկացվեց «Մառնեուլիի մինի փառատոն»: Փառատոնը, CinéDOC - On Tour-ի շրջանակներում, տեղի ունեցավ Մառնեուլիի մունիցիպալիտետի մշակույթի կենտրոնի և մարդու զարգացման և մշակույթի միջազգային դպրոցի /HDACIS-SCHOOL/ նախաձեռնությամբ: Փառատոնի աջակիցն էր Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարանը: Գլոբալային համավարակի պատճառով փառատոնը անցկացվեց փոփոխված ձևաչափով՝ առցանց Մառնեուլիի հեռուստատեսության եթերում: Երեք օրվա ընթացքում հեռուստատեսությամբ ցուցադրված վավերագրական ֆիլմերից հետո, ուղիղ

Եթերով հատուկ փառատոնի համար ստեղծված հաղորդումն էր, որտեղ հրավիրյալ հյուրերը խոսեցին փառատոնի և վավերագրական կինոյի մասին: Ընթացիկ տարի Մառնեուլիի մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ, ծրագրում ընտրված վրացական վավերագրական ֆիլմերը հատուկ մինիփառատոնի համար թարգմանվեցին և ադրբեջանական սուբտիտրեր դրվեցին:

Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերաքվի գյուղում «Միասնական Կովկաս 2020» (One Caucasus 2020) փառատոնում Մառնեուլի մունիցիպալիտետի «Մշակույթի կենտրոնին» առընթեր գործող ”Sunshine/ Սանշայն» և ”Midnight/ Միդնայթ» բեռների համերգ կայացավ: Փառատոնն այս տարի թվով յոթերորդ անգամ ստեղծեց տարածություն կովկասցի երիտասարդների հանդիպման համար, որտեղ հյուրընկալվեցին ինչպես սկսնակ, այնպես էլ սեփական երկրում հանրահայտ արվեստագետներ, երաժիշտներ և ճարտարապետներ: Միջոցառման նպատակը ներկայացնում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների միջև ընդհանուր մշակութային երկխոսության, խաղաղ համակեցության և ազատ տարածության ստեղծումը, որը միավորում է տարբեր մասնագիտությունների և հայացքների անձանց:

4.1.1.5 Պաշտպանության ուժերի զինվորական ստորաբաժանումներում մշակութային բազմազանության թեմայի մասին գիտակցության բարձրացման նպատակով միջոցառումների անցկացում

Բազմերանգության, ինկլյուզիայի և կանանց հավասար մասնակցության թեմաներով գիտակցության բարձրացման նպատակով, Վրաստանի պաշտպանության նախարարության քաղաքացիական և զինվորական ծառայողները մասնակցեցին «Պաշտպանության և անվտանգության հարցերով քաղաքացիական խորհուրդ» կազմակերպության կողմից պլանավորված առցանց աշխատանքային հանդիպումներին: Աշխատանքային հանդիպումները նպատակաուղղված են «Բազմերանգություն և կանանց հավասար մասնակցություն պաշտպանության և անվտանգության ինստիտուտներին» նախագծի շրջանակներում (նախագծին աջակցում է Վրաստանում Նիդեռլանդների դեսպանությունը և իրականացվում է վերոնշյալ կազմակերպության կողմից) իրականացված էական հետազոտության նախնական արդյունքները ներկայացնելուն, պաշտպանության և անվտանգության սեկտորում էթնիկ, կրոնական և այլ նշանով փոքրամասնությունների համար գոյություն ունեցող պատնեշների մասին բանավեճեր անցկացնելուն և տեղական ու միջազգային փորձագետների կողմից միջազգային փորձի փոխանակմանը և համապատասխան հանձնարարականներ հաղորդելուն: Ընդհանուր առմամբ տեղի ունեցավ 7 առցանց աշխատանքային հանդիպում:

4.1.1.6 Պաշտպանության նախարարության քաղաքականության փաստաթղթերում բազմաբղետ համայնքների ինտեգրում

Վրաստանի պաշտպանության նախարարությունը ակտիվորեն ձգտում է բազմաբղետ և ինկլյուզիոն համայնքների ինտեգրումը և աջակցությունը քաղաքականության փաստաթղթերում, այդ թվում շեշտադրությունը կատարվում է Վրաստանի պաշտպանության ուժերում զինվորագրման հավասար մոտեցման հայեցակարգի նորովի մշակված փաստաթղթի վրա: Այնպես, ինչպես իրավահավասարության և անկողմնակալության սկզբունքը բարձրաձայնված է զինվորական ծառայողների կարիերայի տրանզիցիայի հայեցակարգում, որի առաջնային նախագիծը նույնպես մշակված է և ընթանում են ներքին քննարկումներ: 2020 թվականի սկզբին, Վրաստանի պաշտպանության նախարարությունը աջակցեց գերատեսչությունում «Պաշտպանության և անվտանգության հարցերում քաղաքացիական խորհուրդ» կազմակերպության կողմից իրականացված էական հետազոտությանը, որը նպատակադրված է պաշտպանության և անվտանգության սեկտորում էթնիկ, կրոնական և այլ նշանով փոքրամասնությունների հիմնախնդիրների ուսումնասիրությանը և համապատասխան հանձնարարականներ տալուն: Նշված հետազոտության արդյունքները նախատեսված են պաշտպանության ուժերի զինվորագրման հայեցակարգում, որի առաջնային նախագիծը նույնպես մշակված է և պատրաստ է հաստատման համար:

4.1.1.7 Հասարակական գործիչների, պոետների և գրողների հոբեյանների նշում, գրական երեկոների կազմակերպում, աշակերտ-երիտասարդների ընդգրկում: Հայտնի նկարիչների հոբեյանների նշման և ցուցահանդեսների, ինչպես նաև պատանի նկարիչների նկարների ցուցահանդեսի կազմակերպման օժանդակություն

Ք.Բաթումիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները իրականացրին հետևյալ միջոցառումները.

- «Լեսիոբա» տոն, Լեսիա Ուկրաինկայի ծննդյան օրվան նվիրված միջոցառում,
- Տարաս Շևչենկոյի ծննդյան օրվան նվիրված միջոցառում,
- գրական երեկո Բանաստեղծ Վախտանգ Դլոնտիի և Հենրիխ Դոլիձեի հետ,
- «Ճանապարհով և կամրջով» միջոցառում, որն իր հերթին ներառում էր «Էստաֆետա» սպորտային մրցում և պատանի նկարիչների ցուցահանդես և մրցույթ,
- հասարակական գործիչ Վիդադի Ախունդովի 80-ամյա հոբեյանին նվիրված միջոցառում:

4.1.1.8 Էթնիկ փոքրամասնությունների տարբեր ժողովրդական մշակութային և կրոնական տոների նշում: Նույնպես, Վրաստանի ավանդական ժողովրդական մշակութային և կրոնական տոների կազմակերպման գործին ընդգրկվածություն

Ընթացիկ տարի ք.Բաթումիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի աջակցությամբ և «Բարեկամության տան» կազմակերպմամբ տեղի ունեցան էթնիկ փոքրամասնությունների

մշակութային և կրոնական տոներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար.

- էթնիկ փոքրամասնությունների ազգային/կրոնական/մշակութային տոներ.
 - ❖ Սուրբ Ծննդյան տոն,
 - ❖ Օսվենցիումի գաղութային ճամբար «Շուա»-ի ազատագրման 75-ամյակ,
 - ❖ Ժողովրդական տոն «Տու-բի-շվատ» -ի ծառերի նոր տարի:
- Վրաստանի/միջազգային ժողովրդական/կրոնական/մշակութային տոներ.
 - ❖ Մոր և կանանց միջազգային տոներին նվիրված միջոցառումներ,
 - ❖ Ղուրբան Բայրամի տոն,
 - ❖ Ուկրաինայի անկախության օր

Միջանկյալ նպատակ. 4.2 Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանում և ժողովրդականացում

Խնդիր. 4.2.1 Էթնիկ փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակութային արժեքների պահպանում

4.2.1.1 Ոչվրացալեզու դպրոցներում էթնիկ փոքրամասնություններին գրքային հիմնադրամով օգնություն

Գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում 2020 թվականին Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանն իրականացրեց 4 ակտիվություն: Այս միջոցառումների նպատակն էր Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության, արվեստի և ավանդույթների ժողովրդականացումը, նրանց ինտեգրումը վրացական մշակութային տարածքում:

- Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժումը Ախալքալաքի մունիցիպալիտետի Մարտունի, Օրջա, Խանդո, Գումբուրդո, Մոդեգամ, Խեվեթի, Մյասնիկյան, Կորխ, Օկամ, Քարծեփ, Կոճիո, Մաջադիա, Ղադո, Տուրցխ, Լոմատուրցխ, Ալաթուման, Գոման և Բալխո գյուղեր հրավիրեց, որտեղ մոտ ժամանակների գրքերով փոքր վրացական գրադարան կարգավորեց:

4.2.1.2 Ֆոտո-ցուցահանդես «Բազմազգ Վրաստան»

Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.2.1.3 Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների աշակերտների համար կրթական էքսկուրսիաների անցկացում Ազգային գրադարանում

Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի կողմից պլանավորված ակտիվությունը չի իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.2.1.4 Էթնիկ փոքրամասնությունների ոչնյութական մշակույթի պաշտպանության և պահպանության նպատակով ակնառու ներկայացուցիչների մասին նշանակալից միջոցառումների անցկացում, ցուցահանդեսների կազմակերպում

Ք.Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվությանը համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.2.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ժողովրդական տոնահանդեսների՝ «Հավասու տոն» (Օալկա), «Նովրուզ Բայրամ» տոնի նշում, հանդուրժողականության միջազգային օրվա նշում,

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետների կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.2.1.6 Հանդուրժողականությանը նվիրված մշակութային-կրթական միջոցառումների անցկացում

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետների կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.2.1.7 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակույթի պահպանությանը և զարգացմանը օժանդակություն էթնիկ փոքրամասնությունների մշակութային-ճանաչողական տեղեկատվական բնույթի հանդիպումների/բանավեճերի կազմակերպում էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ներկայացում/միջոցառումների խրախուսում

Ք.Բաթումիի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի

(COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

Միջանկյալ նպատակ. 4.3. Մշակութային բազմերանգության խրախուսում

Խնդիր. 4.3.1 Միջմշակութային երկխոսության զարգացում

4.3.1.1 Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացում

Պետական նախարարի աշխատակազմի կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.3.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսուցիչների համար եվրոպական և եվրատլանտյան կառուցվածքներում ինտեգրման հարցերի մասին գիտակցության բարձրացման նպատակով Ք. Բրյուսելում ուսումնական այցի անցկացում

ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի կողմից պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.3.1.3 «Կլոր սեղան» հանդիպման կազմակերպում էթնիկ վրացիների և Թբիլիսիում բնակվող ոչվրացալեզու բնակչության միջև: Միասնական նախագծի իրականացում, որի շրջանակներում էլ մասնակիցները կներկայացնեն իրենց մշակույթը

Ք.Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.3.1.4 Էթնո փառատոնի անցկացում

Դմանիսի մունիցիպալիտետի կողմից ներկայացված տեղեկատվության համապատասխան, պլանավորված միջոցառումները չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.3.1.5 – 4.3.1.6 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում կրթական գործունեության տեսանկյունից եղած թանգարանների հզորացում, թանգարանների աշխատակիցների վերապատրաստման ճանապարհով կրթական ծրագրերի պատրաստում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար թանգարանային հավաքածուների և նյութական և ոչնյութական ժառանգության պահպանության ուղղությամբ անցկացված միջոցառումներին ծանոթացում տուրերի և հատուկ ծրագրերի միջոցով

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ և աջակցությամբ թանգարանների միջազգային խորհրդի Վրաստանի ազգային կոմիտեի կողմից իրականացվեցին նախագծեր «Մշակույթ՝ առանց սահմանների», որի շրջանակներում էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում անցկացվեց 6 միջոցառում: Առցանց ռեժիմում իրականացվեց 80-ից ավելի ակտիվություն:

ՀԻԻԱ Վրաստանի ազգային թանգարան. Բոլնիսի թանգարանը հյուրընկալեց Քվեմո Քարթլիի տարածաշրջանում բնակվող էթնիկ ադրբեջանցի աշակերտներին: Նրանք հանդիպում ունեցան թանգարանի գլխավոր տնօրենի և Թուրքիայի դեսպանի հետ: Միջոցառումը համակարգեց «Նոր մտածողության ինստիտուտ» ոչկառավարական կազմակերպությունը: Այս կազմակերպությունը Վրաստանում Թուրքիայի դեսպանության աջակցությամբ իրականացնում է նախագիծ, որը նախատեսում է էթնիկ ադրբեջանցի բնակչության ինտեգրում վրացական հասարակությունում:

ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի ադրբեջանական մշակույթի թանգարան

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանում նշվեց Վրաստանի պետական դրոշի օրը, անցկացվեց թանգարանին կից գործող մշակույթի կենտրոնում մշակութային կրթական նախագծի շնորհանդես, Խոջալուի ողբերգությանը նվիրված միջոցառում, «Ո՛չ բռնագրավմանը» խորագրով ֆոտոնյութերի ցուցահանդես և վավերագրական ֆիլմի ցուցադրում: Թանգարանի նախաձեռնությամբ, Վրաստանում ադրբեջանալեզու դպրոցների փոխանցվեցին գրքեր: Բացի դրանից, ի նկատի ունենալով համավարակի պայմանները, տարբեր ձևաչափերով ապահովվեցին նաև այլ միջոցառումներ (ընդամենը 14 միջոցառում):

ՀԻԻԱ Դավիթ Բաազովի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական հարաբերությունների պատմության թանգարանում տարվա ընթացքում անցկացվեցին տարբեր տեսակի ակտիվություններ. գրական, հիշատակի և պոեզիայի երեկոներ, կայացավ արժանապատիվ օրերի նշում, կայացան ֆիլմերի շնորհանդեսներ/ցուցադրումներ, անցկացվեցին վիկտորինաներ (ընդամենը 14 միջոցառում):

ՀԻԻԱ Սմիռնովների թանգարան

2020 թվականի փետրվարից «Գիորգի Չուբինաշվիլիի անվան վրացական արվեստի պատմության և հուշարձանների պահպանության ազգային հետազոտական կենտրոն» ՀԻԻԱ

Թանգարանը Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանձնարարությամբ, իրականացնում է նախագիծ «ՀԻԻԱ հուշարձանային թանգարանների հիմնադրամներում պահպանված առանձնահատուկ նշանակության ցուցանմուշների փուլային գույքագրում, միասնական տվյալների բազա ստեղծելու համար», որի հետևանքով թանգարանը կնիքված էր և չէր ընդունում այցելուների:

Թատրոններ.

- **ՀԻԻԱ Թբիլիսիի Ալեքսանդր Գրիբոեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոն** – ֆինանսավորվեց 1 240 000 լարիով
- **ՀԻԻԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոն** – ֆինանսավորվեց 518 800 լարիով
- **ՀԻԻԱ Հեյդար Ալիևի անվան Թբիլիսիի ադրբեջանական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոն** – ֆինանսավորվեց 182 000 լարիով

Համավարակով առաջացած հանձնարարականների և սահմանափակումների պատճառով, նշված թատրոնների ակտիվությունը՝ ստացիոնար բեմադրությունների ցուցադրում, ինչպես նաև հյուրախաղային գործունեություն – տարվա ընթացքում անկայուն ընթացավ: 2020 թվականին թատրոնները, հիմնականում, նոր բեմադրությունների պատրաստության վրա էին աշխատում, որոնք կմտնեն նրանց խաղացանկի մեջ և լայն հասարակությանը ներկայացված կլինեն սահմանափակումները վերացնելուց հետո:

Տարվա առաջին կեսին հայկական թատրոնը, հանձնարարականների պահպանությամբ, բաց տարածություններում հյուրախաղեր անցկացրեց Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում:

Եզրափակիչ փուլում է ՀԻԱԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնի շենքի վերակառուցման գործընթացը: Նորացված թատրոնը կբացվի սահմանափակումները հանելուց հետո:

4.3.1.7 «Բազմերանգ Վրաստան» նախագծի շրջանակներում գրական-երաժշտական միջոցառումների կազմակերպում Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի (Պանկիսի կիրճ) տարածաշրջանների գյուղերում

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության օժանդակությամբ, ՀԻԻԱ Գ.Լեոնիձեի անվան գրականության թանգարանի կողմից հաշվետու ժամանակաշրջանում, պլանի համաձայն իրականացվեց «Բազմերանգ Վրաստան» նախագիծը, որը նպատակամղված է էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջաններում իրականացնել մշակութային-կրթական միջոցառումներ: Նախագծի նախահաշիվը կազմեց 26956 լարի:

Նախագծի շրջանակներում երկրում հաստատված կարգավորումների հաշվառումով, այդ թվում հեռավար ձևաչափով, կայացան տարբեր միջոցառումներ էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում (Մառնեուլի մունիցիպալիտետում և Սադախլո, Խոժոռնի, Ալգեթի, Շահումյան, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղերում, Ախալցխի մունիցիպալիտետում, Ծավկայի և Ախալքալաքի մունիցիպալիտետներում, Ախմետայի մունիցիպալիտետում և Սակոբիանո գյուղում):

- ❖ Հանդիպումներ և դասախոսությունների դասընթաց գրողների, գիտնականների, արվեստագետների հետ տարբեր թեմաներով. (աշուղական պոեզիա և ադրբեջանական բանահյուսություն, հայ գրականությունը թարգմանություններում, վրաց-հայկական գրական հարաբերություններ, վայնախները Վրաստանում՝ 19 դասախոսություն/սեմինար),
- ❖ 6 տարբեր տեսակի ցուցահանդես տեղական և ք. Թբիլիսիից ժամանած արվեստագետների մասնակցությամբ,
- ❖ շնորհանդեսներ – վրաց-ադրբեջանական պոեզիայի անթոլոգիա, Վիկտոր Հովսեփյանի պոեզիայի ժողովածու,
- ❖ վերջին ժամանակների կարճամետրաժ անիմացիոն և գեղարվեստական ֆիլմերի ցուցադրում,
- ❖ համերգներ տեղական, Վրաստանի տարբեր տարածաշրջաններից և ք. Թբիլիսիից ժամանած երաժիշտ-կատարողների մասնակցությամբ,
- ❖ շարժական թատրոն՝ 2 ներկայացում «Լոություն, փորձ է» և «Բնությունը թույլերի զենքն է»

Հավելյալ միջոցառումներ.

- ❖ Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից անցկացվեց մրցույթ «Էթնիկ փոքրամասնությունների ինքնագոյի պահպանության նպատակով ստեղծագործական գործունեության օժանդակություն» մրցույթում հաղթող դարձավ 6 նախագիծ և դրանց գումարային ֆինանսավորումը կազմեց 96 875 լարի:
- ❖ Մրցույթի շրջանակներում հրատարակվեց 4 գիրք/քարտարան, հրատարակության համար պատրաստվեց 1 գրքի էլեկտրոնային տարբերակը, որտեղ արտացոլված են Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ստեղծագործությունը, մշակութային ավադույթները և օրենք-սովորությունները:
- ❖ Ստեղծվեց կայք-ապլիկացիա՝ տեղեկատվական բազա, որտեղ որոնման համակարգով հնարավոր է Վրաստանում բնակվող մշակույթի ոլորտում գործող էթնիկ փոքրամասնությունների և նրանց աշխատանքների, ինչպես նաև մշակութային ժառանգության հուշարձանների և այլ մշակութային տեսարժանությունների մասին տեղեկատվություն գտնել:

4.3.1.8 «Ճանաչի՛ր Վրաստանը» նախագծի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների՝ Վրաստանի մշակութային հուշարձանների և տեսարժան վայրեր այցելության օժանդակում (էքսկուրսիաների/տուրերի կազմակերպում)

Ք. Բաթումիի քաղաքապետարանին կից գործող «Բարեկամության տան» կողմից իրականացվեցին հետևյալ միջոցառումները. էքսկուրսիոն տուր «Դենդրոլոգիական զբոսայգի» (Շեկվեթիլի), էքսկուրսիոն տուր «Մանրանկարչական Վրաստան» (Շեկվեթիլի/Ցիցինաթելա), էքսկուրսիոն տուր սոճուտ (Քոբուլեթի), էքսկուրսիոն տուր Մտիրալա (Չաքվիի գագաթի ազգային զբոսայգի):

Հավելյալ միջոցառումներ.

Քվեմո Քարթլիի երկրամասային վարչության ակտիվություն. ընթացիկ տարի One Caucasus փառատոնի մասնակիցները Բոլնիսում և Մառնեուլիում բնակվող քաղաքացիներին աջակցության տեսագրություն ձայնագրեցին: One Caucasus փառատոնը, Բոլնիսում և Մառնեուլիում կարանտինային իրավիճակի պայմաններում բնակվող բնակչությանը համերաշխություն էր արտահայտում: Փառատոնի 54 կամավոր, երաժիշտ, ուսուցիչներ և մասնակիցներ 17 երկրներից, աջակցության տեսագրություն ձայնագրեցին և Բոլնիսում և Մառնեուլիում բնակվող մարդկանց համերաշխություն արտահայտեցին: One Caucasus միջոցակցիպլինային միջազգային փառատոն է, որը տեղի է ունենում ամենամյա:

Հաշվետու ժամանակաշրջանում Բոլնիսի նոր թանգարանում, Գյոթեի ինստիտուտի աջակցությամբ, իրականացված «Գերմանացիները Վրաստանում» նախագծի փակում տեղի ունեցավ: Նախագծի նպատակը Քվեմո Քարթլիում բնակվող երիտասարդների համար վրաց-գերմանական հարաբերություններին ծանոթությունն էր: Դասախոսային դասընթացի շրջանակներում ընդամենը հինգ դասախոսություն անցկացվեց և դրան մասնակցություն ունեցավ 140 աշակերտ:

Պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ կառավարական հանձնաժողովի գործունեություն.

4.3.1.9 Հանձնաժողովի նիստերի անցկացում

Տարվա ընթացքում պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ գործունեությունը շարունակեց պետական ռազմավարության և գործնական պլանի իրականացման գործընթացը արդյունավետ վարելու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովը: Կայացան հանձնաժողովի արտագնա նիստեր, աշխատանքային հանդիպումներ, թեմատիկ բանավեճեր և խորհրդատվություններ, մշակվեցին առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք նախատեսված են նոր

ռազմավարական փաստաթղթում: Տարվա ընթացքում տեղի ունեցան արտագնա աշխատանքային նիստեր ք. Բորջոմիում և ք. Բաթումիում: Արտագնա նիստին մասնակցում էին ինչպես կառավարական հանձնաժողովի անդամները, այնպես էլ ժողովրդական պաշտպանի, էթնիկ փոքրամասնությունների և ոչկառավարական սեկտորի ներկայացուցիչներ: Հանդիպմանը դատողություն արեցին այն հարցերի և առաջնահերթային ուղղությունների մասին, որոնք, հնարավորության սահմաններում, նախատեսված էին նոր փաստաթղթում:

4.3.1.10 Կառավարական հանձնաժողովի թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում

Կառավարական հանձնաժողովի թեմատիկ աշխատանքային խմբի հանդիպումներ չեն իրականացվել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումից խուսափելու նպատակով մշակված հանձնարարականների պատճառով:

4.3.1.11 Նոր քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական քաղաքականության և գործնական պլանի մշակում

Պետական նախարարի աշխատակազմը անկախ փորձագետների հետ համագործակցությամբ պատրաստեց գործող ռազմավարության և գործնական պլանի կատարման միջանկյալ և վերջնական գնահատման զեկույցներ, ինչը Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի խորհրդատուների կոմիտեի կողմից Վրաստանի հարցով հրապարակված եզրակացությունների և ոչկառավարական կազմակերպությունների հանձնարարականների հետ միասին դրվեց նոր ռազմավարական փաստաթղթի հիմքում,

Ի նկատի առնվեցին դեռևս գոյություն ունեցող մարտահրավերները և ձևավորվեցին դրանց հաղթահարման մեխանիզմները: Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և գործնական պլանի (2021-2030 թթ.) նոր փաստաթղթի վրա աշխատանքը ընթացավ պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությամբ, Վրաստանի կառավարության վարչության հետ համագործակցությամբ և ճյուղային պետական գերատեսչությունների ընդգրկմամբ, քաղաքացիական սեկտորի, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի և դրան կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, շահագրգիռ անձանց ակտիվ մասնակցությամբ:

4.3.1.12 «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2018 թվականների գործնական պլանի» միջանկյալ գնահատման փաստաթղթի ներկայացում ժողովրդական պաշտպանին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին

Տես՝ 4.3.1.11

4.3.1.13 «Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թվականների գործնական պլանի» վերջնական գնահատման փաստաթղթի պատրաստում

Տես՝ 4.3.1.11

4.3.1. 14 Կառավարական հանձնաժողովի նիստերի և հանդիպումների անցկացում

Տես՝ 4.3.1.9

Հավելյալ միջոցառումներ.

- Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ կայացավ քաղաքացիական հասարակության խորհրդատվական խորհրդի հեռավար երեք նիստ: Նիստերի ժամանակ դատողություն արվեց համավարակի պայմաններում էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող տարածաշրջանների բնակչության կարիքների, առկա մարտահրավերների և դրանց հատման ուղիների մասին: Նաև քննարկվեց պետական նախարարի աշխատակազմի կողմից, վերոնշյալ ժամանակաշրջանում իրականացված գործունեությունը,
- հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեցին պետական նախարարի ծանոթության բնույթի հանդիպումներ Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջանների նահանգապետերի, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների – ոչկառավարական կազմակերպությունների, ժողովրդական պաշտպանին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, մանկավարժների, երիտասարդների, տարեցների հետ: Հանդիպումների ժամանակ ինտերակտիվ ռեժիմում քննարկվեցին քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ ձեռքբերած առաջընթացը և դեռևս գոյություն ունեցող մարտահրավերները:
- Տարվա ընթացքում, Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարը, պարբերաբար շնորհավորում էր Վրաստանում բնակվող էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ինչպես բնակչությանը, այնպես էլ դիվանագիտական կորպուսին նրանց ազգային և կրոնական տոները:

Համագործակցություն տեղական և միջազգային ակտորների հետ

Տարվա ընթացքում պետական նախարարի աշխատակազմը ակտիվորեն համագործակցում էր քաղաքացիական սեկտորի, փորձագետների, միջազգային կազմակերպությունների և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների/բնակչության հետ: Տարբեր թեմաներով կանոնավոր կերպով անց էին կացվում հանդիպումներ, բանավեճեր, խորհրդատվություններ:

Արգասաբեր համագործակցություն տեղի ունեցավ նաև տարբեր միջազգային ձևաչափի շրջանակներում. պետական նախարարի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցեցին Եվրոպայի խորհրդի հակախտրականության, բազերանգության և ընդգրկվածության կառավարող կոմիտեի (CDADI) առաջին լիազումար հանդիպմանը, Եվրամիության և Վրաստանի միջև ասոցիացման կոմիտեի 6-րդ հանդիպմանը, ինչպես նաև Եվրամիության և Վրաստանի միջև մարդու իրավունքների երկխոսության 13-րդ հանդիպմանը, որի շրջանակներում գործընկերները կիսվեցին էթնիկ փոքրամասնությունների աջակցության և ինտեգրման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի, գոյություն ունեցող իրավիճակի մասին: Նույնպես ապահովված էր ընդգրկվածությունը Եվրոպայի խորհրդի գնչունների հարցով փորձագետների կոմիտեի (ADI-ROM) 2-րդ հանդիպմանը:

Միջազգային մեխանիզմների շրջանակներում, տարվա ընթացքում, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանձնած պարտականությունների կատարման մասին պատրաստվեցին հետևյալ զեկույցները.

- ❖ համապարփակ պարբերական տեսության 3-րդ մոնիթորինգի ցիկլի շրջանակներում «Վրաստանի պետական հաշվետվություն 2020»,
- ❖ ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կատարման շրջանակներում 9-րդ և 10-րդ պարբերական հաշվետվությունները,
- ❖ քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային փաթեթի կատարման մասին Վրաստանի 5-րդ պարբերական հաշվետվությունը:

Նշված հաշվետվություններում արտացոլված են այդ թվում էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության և ինտեգրման ուղղությամբ ձեռքբերված արդյունքները:

Տարվա ընթացքում, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման, պետական ծրագրերում և սպասարկումներում նրանց իրազեկվածության/գիտակցության բարձրացման, ինչպես նաև գործնական պլանով նախատեսված միջոցառումների և նախագծերի իրականացման նպատակով, պետական նախարարի աշխատակազմին աջակցությունն իրականացվում էր ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականությանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը և ինտեգրմանը աջակցության» նախագծի շրջանակներում: